



ԵՐԱՄԺԻՇՏ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

Լույս է տեսնում 2005թ. դեկտեմբերից

#06 (150) հունիս 2018

գինը՝ 200 դրամ

ԱՐԱՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 14-ՐԴ ՄՐՅՈՒՅԹ



ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունց, Աճառ Չախուրյան, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան, ՀՀ Նախագահ Արմեն Արարայան, Նուրն Սարգսյան

9

ՀՈՒՆԻՍԻ ՄԵԿԸ ԵՐԵՎԱՆԵՐԻ ԳՍԵՏԳՆՆՈՒԹՅԱՆ ՕՐԵ Է



Նարե Գասոյան, Ամելի Ոսկանյան

«Թանգարանը երեխաներին» միջոցառում Կոմիտասի թանգարան-ինստիտուտում

Հունիսի 1-ին երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տեղի ունեցավ հրաշալի միջոցառում նվիրված մանուկներին:

3

Долгое служение музыке (ко дню рождения Марины Мартиновой)

“Сколько себя помню, всегда ходила со скрипкой в руках. Я являюсь ветераном Симфонического оркестра, который недавно отметил свое 90-летие. В оркестре я проработала 30 лет (с 1961 по 1992)”. Это слова Марины Владимировны Мартиновой, скрипачки, иллюстратора кафедры камерного ансамбля Ереванской государственной консерватории им. Комитаса.



“Марина Мартинова”, худ. Минас Аветисян, 1962

Марина Мартинова родилась в семье инженеров. Ее дед, Иосиф Андреевич Тер-Аствацатурян, инженер-гидростроитель, кавалер первого ордена Ленина в Закавказье. Его имя присвоено Канакерской ГЭС. Мать, Мария Иосифовна Тер-Аствацатурян, инженер-гидротехник, более 30 лет проработала в Водно-энергетическом институте.

Отец, Мартинов Владимир Павлович, заслуженный инженер, почетный энергетик СССР, более пятидесяти лет проработал в должности главного диспетчера “Армэнерго”.

2

ՏԱՐԵՎԵՐՉՅԱՆ ՀԱՄԵՐԳ Կ. ՍԱՐԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Մեկ տարով մեծացած ևս մեկ սերունդ, ավարտած ևս մեկ ուսումնական տարի, որն իր մեջ շատ կարևոր խորհուրդ է պարունակում: Այն է, մանուկների շատ կարևոր դաստիարակության մեկ ճյուղ՝ երաժշտական դաստիարակություն:

Կ. Սարաջյանի անվ. երաժշտական դպրոցի միջոցով հյուրընկալ պատերի ներքո հազարավոր համերգներ են հնչել: Դրանք առանձնացել են իրենց յուրահատկությամբ, աչքի ընկել պրոֆեսիոնալ մակարդակով, սակայն այս տարվա տարեվերջյան համերգն առանձնահատուկ էր ոչ միայն այդ առումներով: Որովհետև Հայաստան աշխարհին իր աշխարհացունց հայտնի «Թավշյա, առանց բռնության և բաց ձեռքերի հեղափոխության» ապացուցեց շատ կարևոր բան. քանակով փոքր, բայց միասնական ու արժանապատիվ մեր ազգն ունի իր չափանիշներն ու անկախ ապրելու պատկերացումները:



Ինեսա Պետրոսյան (դրոցնու Ա. Հարությունյանի դասարան), կոնցերտմայստեր՝ Մ. Զիլիգարյան Կ. Սարաջյի դպրոցի դահլիճ

11

Քանոն ժողովրդական երաժշտական գործիքի դերը կրթական համակարգում և կատարողական արվեստը տարածաշրջանում

Ավանդույթ Ժամանակի շունչը ժողովրդական արվեստում Նորարարությունը և վտանգները

ՀՀ ժողովրդական արտիստ, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի և Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, Սիջազգային Մեծ հանրագիտարանի Ոսկե մեդալակիր, Երևանի քաղաքապետարանի Ոսկե մեդալակիր Հասմիկ Լեյլոյանը պրոֆեսիոնալ համերգային գործունեությունը սկսել է 1970-ականներին: Նա ավանդական հայկական քանոնը ներկայացրեց հանրությանը, որպես լիարժեք մենակատարային երաժշտական հայկական ժողովրդական գործիք՝ դուրս բերելով այն միայն անսամբլային նվագակցող կամ մեկ-երկու մանրանվագ կատարող գործիք լինելուց:



Հասմիկ Լեյլոյան

Ներկայացնելով գոյություն ունեցող քանոնի հայկական ժողովրդական ավանդական և կոմպոզիտորական երկացանկը իր արվեստում կարևորում էր այդ տարիներին հարստացնելու դրանք նոր մոտեցումներով:

1974 թ. Հասմիկ Լեյլոյանը ներկայացրեց երկու բաժնից կազմված մենահամերգ, որտեղ քանոնով դաշնամուրի նվագակցությամբ հայ կոմպոզիտորների և ժողովրդական ստեղծագործությունների կողքին հնչեցին եվրոպական դասական հանրաճանաչ վիրտուոզ ստեղծագործություններ՝ Սարասատի «Գնչուական մեղեդիները», Լիստի 2-րդ Ռապսոդիան, Սեն-Սանսի Ինտրոդուկցիա-Ռոնդո կապրիչչիոգո, Պազանինիի 24 կապրիչսը, Շոպենի 7-րդ Վալսը և այլ աշխարհահռչակ ստեղծագործություններ, որոնք առաջին անգամ կատարվեցին քանոնով:

8

ՀԱՄԵՐԳ ՆՎԻՐՎԱԾ ՊՐՈՑԵՍՈՐ ԼԱՐԻՍԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ



Լարիսա Մկրտչյան

Երաժիշտները, հատկապես՝ մեներգիչները, սիրով նշում էին պրոֆեսոր Լարիսա Մկրտչյանի կատարողական և մանկավարժական գործունեության 30-ամյակը, հունիսի 15-ին, Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը:

Հնագույն երաժշտության «Տաղարան» անսամբլը և գեղարվեստական ղեկավար, դիրիժոր և տաղանդաշատ դաշնակահար, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սեդրակ Երկանյանը սիրահոժար աջակցեցին ներկայացնելով Երևանյան ունկնդրին՝ մասնագիտական գործունեությունը ծավալած Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում, սերունդներ դաստիարակած պրոֆեսոր և հայկական վոկալ դպրոցի կրողներից մեկին, վառ անհատականություն Լարիսա Մկրտչյանին:

5

Долгое служение музыке

1 В доме, где Владимир Павлович прожил 30 лет, установлена мемориальная доска. Он родился в Одессе, учился фортепиано у того же педагога, что и Эмиль Гилельс и в свое время ему прочили карьеру пианиста. Переехав с семьей в Тбилиси и получив специальность инженера, он на всю жизнь сохранил любовь к музыке и всегда мечтал, чтобы дочь стала музыкантом и воплотила его мечту.

Первые музыкальные впечатления Марины связаны с Ереванской музыкальной школой им.Спендиаряна. Девочка очень любила играть на скрипке, часто соседи подзывали и просили сыграть, и она по слуху играла для них все, что они хотели. Совершенно особенную, теплую и доброжелательную атмосферу в школе создали ее директор Вартуш Александровна Закарян и завуч Михаил Иванович Мирзаян. По скрипке она занималась у опытного педагога Гоар Нерсесовны Акопян, а по композиции – у совсем молодого тогда Эдварда Михайловича Мирзояна. Марина Владимировна вспоминает полку, слова к которой придумал ее брат Валентин, в дальнейшем доктор технических наук, член нескольких Академий, который был профессором Славянского университета, работал в ЕРНИИМ.

С 4-го класса Марину перевели в музыкальную школу-десятилетку им.Чайковского в класс профессора Дмитрия Николаевича Лекгера. У него она проучилась всего один год, но этот недолгий период запомнился на всю жизнь. По воспоминаниям Марины, педагога она обожала и на занятия ходила всегда в приподнятом настроении. На уроках часто присутствовала ее бабушка, Евгения Александровна Тер-Аствацатрян. За полгода было пройдено не менее десяти этюдов Крейцера и Мазаса, множество пьес. Дмитрий Николаевич требовал строгого режима в домашней работе. Вскоре Лекгер, в поощрение успехов Марии, зачислил ее в руководимый им в Десятилетке унисон скрипачей. Но девочка мечтала играть в оркестре и несмотря на то, что в оркестр зачисляли учеников с 5-го класса, ее досрочно приняли в школьный оркестр под руководством ученика К.С.Сараджева Андраника Согомоняна. Вспоминает Марина Владимировна: «Передо мной у Лекгера занималась его любимая восьмиклассница Ирина Мартиросян. Дмитрий Николаевич вызывал меня на один час раньше, чтобы я слушала ее урок (прекрасно играла она ре-мажорный полонез Венявского). Лекгеровские ученики готовились тогда к внутриклассному конкурсу на Канцонетту Чайковского, и требовательность педагога, соответственно, возрастала. Тогда же Дмитрий Николаевич рекомендо-

вал мне, еще ребенку, «разобраться на летних каникулах в «Канцонетте». Любила я слушать и Зузу Саркисян. Она меня привлекала как личность, и очень хотелось ей подражать. А в кинотеатре «Москва» мы с родителями смотрели кинохронику о десятикласснице (тоже ученице Лекгера) Зое Петросян. Это впечатляло...»

Марина Мартынова была самой младшей из учеников Лекгера, привлеченной к практической апробации нового метода скрипичной игры, предложенного профессором Х.С.Кушнаревым. Этот метод нравился молодой скрипачке, нравились и «преувеличенные» (как тогда говорили) движения скрипки по отношению к смычку, которые соответствовали фразировке и усваивались быстро и естественно. Много позже, из письма Х.С.Кушнарева к руководителю музыкального фронта Армении Завену Гевондовичу Вартаняну, стало известно, какую негативную реакцию дирекции Ереванской консерватории вызвало выступление «малюсенькой девочки» (это была Марина Мартынова), продемонстрировавшей метод Кушнарева.

С переездом Д.Н.Лекгера на работу во Львов занятия прервались. «Помню, как мы с родителями ходили к нему прощаться (родных моих он очень любил). Не забуду, как при прощании плакал его ученик Зарэ Саакянц... Дмитрий Николаевич великодушно предлагал взять меня с собой во Львов: «Будешь жить у меня дома и учиться в моем классе до конца». Мне он пророчил большое исполнительское будущее, но родители мои сомневались, копебались... Меня тронуло письмо, полученное от Дмитрия Николаевича из Львова: «Ты являешься одной из тех, из-за кого я с удовольствием вернулся бы назад в Армению, таких учеников как в Ереване, тут нет».



Класс скрипки Д.Н.Лекгера в Ереванской школе-десятилетке им.Чайковского. 1946 год. Сидят: Зузу Саркисян, Ирина Мартиросян, Д.Н.Лекгер, Сильва Мекинян, Элеонора Тамразян; стоят: Ара Мхитарян, Армен Будагян, Анатолий Китбальян, Левон Мамякян, Владимир Коган, Джон Едигарян, Лия Мелик-Мурадян, Марина Мартынова.

Письмо это, как и фотографию лекгеровского класса, храню как реликвию».

Далее преподавателем Марины Мартыновой стал Атик Сааквич Матинян, только что окончивший Московскую консерваторию, который тоже пытался отправить девочку после окончания школы в Москву к своему профессору Константину Георгиевичу Мострасу, но тщетно. После окончания школы Марина поступила в Ереванскую консерваторию в класс профессора Карпа Савельевича Домбаева. Окончив консерваторию с отличием в 1961 году, она поступила в Филармонический симфонический оркестр Армении.

Армянский национальный филармонический оркестр, созданный 94 года назад Аршаком Адамяном и Александром Спендиаряном, является национальным центром профессиональной оркестровой музыки в Армении. В статье «А.А.Адамян и Ереванская консерватория» профессор И.Г.Тигранова пишет: «У Спендиарова родилась идея провести концерты из своих произведений, переинструментированных для существующего тогда состава (19 человек). Это свершилось 10 декабря 1924 года».

За более, чем 90 лет своей жизни оркестр сыграл бесчисленное множество программ, премьер, видел в своем зале десятки и сотни тысяч зрителей. Симфонический оркестр Армении сыграл выдающуюся роль в общем развитии армянской музыкальной культуры, композиторского и исполнительского творчества. По словам М. А. Рухкян, «творческие проекты Государственного филармонического оркестра рассчитаны на широкого слушателя и пропаганду высокого музыкального искусства, которое простирается от Баха и Гайдна до Эдварда Мирзояна».

Художественным руководителем, главным дирижером Филармонического оркестра Армении (до 1991 года – Симфонический оркестр Армении) был К. Сараджев (1941–1945), дирижер – И. Хараджян (1941–1946). После короткого перерыва, с 1945 года оркестр продолжил свою деятельность под руководством разносторонне одаренного музыканта Михаила Малунциана (1945–1960 и 1965–1967). Его искусство – это подлинное и большое служение музыке. В 1960–65 гг. главным дирижером и художественным руководителем оркестра был Оган Дурян. Выступления оркестра под эгидой этого дирижера (1960–1965) – ярчайший этап в жизни симфонического оркестра.

После Дуряна в разные годы оркестр возглавляли Михаил Тэрьян (1965–1966), Рубен Варданян (1967–1970), Арам Катанян (1970–1973), в 1970–73 гг. – А.Катанян, в 1974–81 гг. – Д.Ханджян, истинный масштаб которого с годами становится все более ясным. В Давиде Ханджяне все видели личность. Благодаря усилиям Д. А. Ханджяна в ЦК КП Армении было принято постановление «О дальнейшем улучшении пропаганды симфонической музыки в республике». Всемирно известный дирижер Валерий Гергиев работал главным дирижером Государственного симфонического оркестра Армении с 1981 по 1985 гг. Воистину, это, – как метко сказала Марина Мартынова, – подарок судьбы. Гергиев сыграл десятки программ, ощущалась какая-то одержимость музыкой, полная отдача ей. Незабываемо исполнение оркестром под управлением Гергиева «Фантастической симфонии» Г. Берлиоза, симфоний Чайковского,



Марина Мартынова, Ереван, 1976 г.



Марина Мартынова, зал 2 этажа ЕГК им.Комитаса



Давид Ханджян

Долгое служение музыке

2 Малера, Прокофьева, Шостаковича. В 1986 – Р. Мангасарян, затем М.Нерсисян, в 1987–89 гг. – В.Папян, в 1989–2000 – Лорис Чкнаворян, компо-

дами. С 2000 года продолжается сегодняшний день оркестра, руководимого молодым, талантливым, энергичным дирижером Эдуардом Топчяном. В репертуар оркестра входят произведения классических и современных армянских, русских и западноевропейских композиторов.



Памятник Иосифу Андреевичу Тер-Аствацатрян



“Скрипачка Марина” худ. Карен Смбалян, 1985

Долгие годы Марина Мартинова сидела за 3–м пультом первых скрипок Государственного симфонического оркестра Армении, где исполнила колоссальный оркестровый репертуар. Вместе с оркестром она побывала во множестве городов Советского Союза. Она работала с великолепными дирижерами: Оганом Дуряном, который был, по словам Мартиновой, “талантом-самородком, имел феноменальную память и волшебные руки”; Михаилом Малунцианом – “прекрасный педагог и дирижер”; Давидом Ханджяном, “к сожалению рано ушедшим из жизни, который обогатил оркестр таким уникальным репертуаром, который и теперь дает о себе знать”, многими другими дирижерами и гастролерами из-за рубежа и России. Особое место занял Лорис Чкнаворян, “который открыл оркестру “окно в мир”, под его управлением оркестр начал выезжать за рубеж. Каждый его концерт начинался исполнением молитвы “Отче Наш”.

зитор и дирижер, возглавивший коллектив в самые кризисные для нашей культуры годы (1989–2000). Это была поистине подвижническая деятельность, огромное организационное дарование, вопреки трудностям переходного времени. К участию в концертах он привлекал совсем еще юных одаренных школьников, таких, как Лилит Даниелян, Александр Чаушян, Сергей Хачатрян, Ваган Мартиросян, ставших позднее музыкальными звез-

Много лет Марина Мартинова работала на кафедре камерного ансамбля ЕГК под руководством профессора Карена Костяняна. Ученица талантливого педагога, профессора Левона Манвеловича Мамиконяна, имея

очень большой репертуар скрипичных сонат, дуэтов и трио, она выступала во всевозможных концертах с лучшими студентами.



“Сегодня с большим удовольствием посещаю концерты Национального государственного филармонического оркестра под управлением главного дирижера Эдуарда Топчяна и чувствую, что оркестр находится в надежных руках. Также я очень люблю концерты Государственного симфонического оркестра и его перспективного дирижера Сергея Смбаляна. Сидя в зале у меня такое чувство, что я сливаюсь с оркестром и нахожусь внутри него...” – Марина Мартинова.

СОФА АЗНАУРЯН
композитор, редактор “Издательства ЕГК”

«Թանգարանը երեխաներին» միջոցառում Կոմիտասի թանգարան-ինստիտուտում

ՀՈՒՆԻՍԻ ՄԵԿԸ ԵՐԵՎԱՆԵՐԻ ԳԱՇՏԳԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵ Է

1 Այցելուներն ականատես եղան, թե փոքրիկներն ինչպիսի եռանդով և խանդավառությամբ էին իրենց առաջին փոքրիկ քայլերն անում անցկացնելով թանգարանի շրջայցը, որը նաև համեմուն էին Կոմիտասի բանաստեղծություններով: Նրանք հայտնվել էին իրենց երազանքների մեծերի աշխարհում:

Տոն էր նաև մեծերի համար. թե՛ հյուրերը, թե՛ այցելուներն ու թանգարանի աշխատակիցները մի պահ տեղափոխվել էին մանկության աշխարհ:

Կոմիտասի առաքելությունն էր մոռացումից փրկել, բյուրեղացնել հայկական ժողովրդական երգը, միջնադարյան հոգևոր երգարվեստը: Այս հիմքերի վրա էլ նա հիմնադրեց ազգային կոմպոզիտորական դպրոցը՝ մի ամբողջ մշակութային ավանդույթ, որի շնորհիվ հայ ժողովուրդն սերունդից սերունդ կփոխանցի և կպահպանի մեր մշակութային ժառանգությունը: Ինչպես մշտական այցելուները և շատերն արդեն նկատել են, Կոմիտասի թանգարան-ինստիտուտում երեխաները միշտ ակտիվ մասնակցել են մանկական, կրթական ծրագրերի և այլ միջոցառումների: Նրանք մշտապես թանգարանի ուշադրության կենտրոնում են. մեր պարտականությունն է շարունակել Կոմիտասի սերմանած այդ ավանդույթը:

Կոմիտասն ինքը, դժվար մանկություն ապրելով և սեփական երեխա չունենալով հանդերձ, իբրև հոգևորական իր հանգստությունն է գտել երեխաների հետ շփվելիս: Նրա ժամանակակիցների, աշակերտների հուշերից գիտենք, որ նա շատ կատակասեր էր, սրամիտ, եռանդով լի և ուրախ: Իր ողջ կյանքում շատ է սիրել երեխաներին և շրջապատված եղել նրանցով: Նրանց չարածիմություններին արծազանք էր տալիս միայն աչքերի փայլով:

Նա շատ էր սիրում Ամենայն հայոց կաթողիկոս Սկրտիչ Ա Խրիմյանի եղբոր որդու երեխաներին՝ Խոսրովին և Կարինին, Կարապետ Քոչարյանի որդուն Արամ Քոչարյանին և շատ այլ փոքրիկների ու ժամանակ էր անցկացնում նրանց հետ:

Հունիսի 1-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտը բացել էր իր դռները փոքրիկ էքսկուրսավարների համար:

Թանգարանի ութ սրահներից յուրաքանչյուրն ուներ իր փոքրիկ էքսկուրսավարը: Նրանք այնքան ոգևորված էին, որ ձգտում էին ներկայացնել մի քանի սրահներ:

Ի զարմանա մեզ՝ կարճ ժամանակահատվածում երեխաները կարողացան յուրացնել տեքստերն, սովորել էքսկուրսավարի էթիկայի կանոնները, հանդես գալ դերասանական հմտություններով



Ա. Պուշկինի անվ. միջնակարգ հանրակրթական դպրոցի սաները



Մարի Մառանդյան, Ամելի Ոսկանյան



Երեխաների մուտքը թանգարան



Փոքրիկները այցելուներին ներկայացնում են թանգարանի սրահները

«ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ» ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՆՍԱՄԲԼԻ 25 ԱՄՅԱԿՆ Է

Հայ արվեստում սիրված երգիչ, աշուղագետ և մանկավարժ, ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի զեղարվեստականակերպչական փայլուն շնորհքի դրսևորումն ու սիրանքի գագաթը հանդիսացող «Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլը 25 տարեկան է:



«Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլ

Ինչու սիրանք, քանի որ 1990-ականները Հայաստանի համար մշակութային «հոգեվարքի» ժամանակներ էին, երբ մեկը մյուսի ետևից լուծարվում կամ «կաթվածահար» էին լինում երաժշտական կոլեկտիվներ: Նման իրավիճակում նոր անսամբլներ ստեղծելն իրոք, սիրանք էր: Իրականում, այն 1927-ին Շարա Տալյանի հիմնադրած «Հայ աշուղներ» և հետագայում 1942-1972 թթ. Վաղարշակ Սահակյանի ղեկավարած «Սայաթ-Նովա» անսամբլի վերստեղծումն էր, որը 20 տարիներ Թովմաս Պողոսյանի սրտում բուն դրած ու փայփայած երազանքն էր:

Վերջապես, երազանքն իրականացավ. դա 1993 թվականն էր: Նա իր շուրջը հավաքագրեց արվեստում իրեն համախոհ մասնագետ և տաղանդավոր երգիչների ու նվագածուների: Մասնագիտական լուրջ խորհուրդներով նրա կողքին էին Հայաստանի բարձրակարգ երաժիշտներ՝ Ռոբերտ Աթաբաբյան, Մարգարիտ Բրուտյանը, ժամնա Ջուրաբյանը, Էդվարդ Միրզոյանը, Վլադիլեն Բալյանը, Ալինա Փաիլևանյանը, Ծովակ Համբարձումյանը, Արզաս Ոսկանյանը, Դանիել Երաժիշտը, Շավիղ Գրիգորյանը, Վլադիմիր Նավասարդյանը, Ալվարդ Ղազիյանը, Անահիտ Կիրակոսյանը և այլք:

Եվ ահա, 1993-ին կայացավ անսամբլի առաջին համերգը՝ Երևանի Հայֆիլհարմոնիայի Փոքր դահլիճում (ներկայումս կոչվում է Առնո Բաբաջանյանի անվամբ): Արժանացրեցին բուռն էին և ոգևորիչ, ունկնդիրն իր սրտի խոսքը թողնում էր անսամբլի տպավորությունների գրքամատյանում, որտեղ կարող ենք գտնել ոչ միայն վերոհիշյալ անձանց, այլև Սիլվա Կապուտիկյանի, Գևորգ Եմինի, Անահիտ Սահինյանի, Հրանտ Մաթևոսյանի, Մկրտիչ Սարգսյանի, Մարտ Մարգարյանի, Էմմա Օատուրյանի, Ազատ Գասպարյանի, Հովհաննես Բաղդասյանի, Օֆելյա Համբարձումյանի, Ռուբեն Մաթևոսյանի, Դավիթ Ղազարյանի, Անգինե Քեչիշյանի և շատ ուրիշ արվեստագետների հիացնունքի խոսքերն ու մաղթանքները:

Անսամբլի համերգային դահլիճները միշտ եղել են լեփ-լեցուն, լինեն դրանք ծրագրված, թե հոբելյանական, սակայն ոգևորիչը համերգին ներկա հանդիսատեսի բազմազանությունն է. մտավորականներ, գործիչներ, գործարարներ, հոգևորականներ, սփյուռքահայ զբոսաշրջիկներ և արվեստագետներ, թոշակառուներ, ուսանողներ, ծնողներ, մանկահասակ երեխաներ և պարզապես՝ «աշուղ սիրող մարդիկ»: Անսամբլը ելույթներով երջանկացրել է Հայաստանի շրջաններում, Արցախում և մոտիկ ու հեռու սփյուռքում ապրող մեր հայրենակիցներին, շրջել է աշխարհի շատ երկրներում՝ Ռուսաստան, Վրաստան, Իրան, ԱՄՆ, Սիրիա, Լիբանան, Շվեդիա, Ավստրալիա և այլուր:

Անսամբլի գործունեությունը եղավ այն հիմնասյունը, որի շուրջ սկսեց լայնանալ և իրականանալ Թ. Պողոսյանի մտահղացումներն աշուղական արվեստի բնագավառի պահպանման և հիմնավոր զարգացման գործում. «Սայաթ-Նովա» մշակութային միություն (1995 թ.), Ջիվանու անվան աշուղական արվեստի դպրոց և Աշուղների միություն (1997), Աշուղագիտական կենտրոն (2000 թ.), Հավասու անվան աշուղական անսամբլ (2004 թ.), աշուղական գրականության և ծայնագրյալ ժողովածուների հրատարակում՝ սա վերջնական թվարկումը չէ այն բոլոր ձեռնարկումների, որոնց թիվումն էին կանգնած են Թ. Պողոսյանն իր հարազատ անսամբլի հետ միասին: Ի դեպ, Աշուղագիտական կենտրոնը հրատարակել է շուրջ երկու տասնյակ աշուղների ժողովածուներ, իսկ այժմ հրատարակում է քսան հատորներից

բաղկացած մատենաշար՝ «Գանձարան հայ աշուղական երգերի», որից վեց հատորն արդեն դրված է սեղանին: Աշխատանքներ են տարվում 7-րդ և 8-րդ հատորների վրա:

Անսամբլը բաղկացած է գործիքային խմբից և երգիչներից: Տարիների ընթացքում, բնականաբար, տեղի է ունեցել սերնդափոխություն: Առաջին կազմի երգիչներին և նվագածուներին փոխարինելու է եկել երիտասարդ սերունդը, սակայն թովմասը երախտագիտությամբ է հիշում յուրաքանչյուրին, ով փոքր ինչ ներդրում է ունեցել անսամբլի կայացմանը: Նա ասում է. «Ես չեմ անտեսում յուրաքանչյուր արտիստի ներդրումն ու նվիրումը, որոնց շնորհիվ կայացավ վերականգնումը»: Անսամբլում տարբեր ժամանակներում աշխատել են այսօր արդեն հայտնի երաժիշտներ՝ Ա. Խաչատուր, Մ. Շահինյան, Ա. Գուլանյան, Գ. Սաֆարյան, Մ. Հարությունյան, Ս. Գալստյան, Գ. Շահբազյան, աշուղ Գ. Գրիգորյան, Մ. Խալաթյան և շատ ուրիշներ: Անսամբլի ստեղծման օրից գործիքային կազմում նվագում են Կ. Բաղդասարյանը, Ա. Դավթյանը և աշուղներ Մ. Քեթյանն ու Բ. Հակոբյանը:

Անհնար է հաշվել 25 տարվա ընթացքում անսամբլի ունեցած համերգների և ելույթների քանակն առավել կարևոր է անսամբլի մասնագիտական ու զեղարվեստական մակարդակի գնահատումը, որը բազմիցս կարող է ենթարկվել և լսում բեմից: Երաժշտագետ Ժ. Ջուրաբյանը անսամբլը անվանում է «հոգևոր տաճար», իսկ երաժիշտ կատարողներին և ղեկավարին՝ «հայ երգի ասպետներ», հիմնավորելով նրանով, որ աշուղական արվեստն ինքնին հնուց եկող ասպետական արվեստի մեր ազգային տեսակն է:

Այո, տարիներ շարունակ հայ ունկնդիրը վայելում է անսամբլի վարպետ կատարումներով իրանցվող հայ աշուղական երգի հմայքը՝ համերգից համերգ միշտ նոր ու թարմ ծրագրով, ավանդական և ժամանակակից աշուղների երգերի ընտրանիով, ինքնատիպ երգչական ձայներով, բարձրարվեստ գործիքավորումներով և մեկնաբանումներով:

Անսամբլի գործունեության տարիների ընթացքում վերականգնվել են անցյալի դասական աշուղների մոռացված երգեր (Նաղաշ Հովնաթան, Սայաթ-Նովա, Ջիվանի, Սահու-

և Թբիլիսիում (Ս. Գևորգ եկեղեցու տարածքում, ուր թաղված է մեծ աշուղը):

Թովմաս Պողոսյանի կյանքի հսկայական և իմաստալից մասը կապվում է նաև հայ ազգային աշուղական դպրոցի հիմնադիր Ջիվանու անվան հետ. թեկնածուական և դոկտորական թեզերի պաշտպանություն, Ջիվանու անհայտ երգերի հրատարակում, աշուղական դպրոցը Ջիվանու պատվավոր անունով կոչելը և այն բազմաթիվ միջոցառումները, որոնք սերտորեն կապված են Ջավախքի մեծ գավախի անվան ու գործունեության հետ: Ավելին, անսամբլի երկացանկի մի հսկայական բաժին ներկայացնում են հենց Ջիվանու անկրկնելի երգերը:

Որպես վերջաբան մեջբերում ենք Թովմաս Պողոսյանի խոսք-պատգամն ուղղված իր սիրելի ունկնդրին. «Մենք հայ աշուղական արվեստի հարուստ գանձի ժառանգորդներն ենք: Գանձ, որը կուտակվել է ուշ միջնադարից և ներկայումս զարգանում է մերօրյա արվեստագետների շնորհիվ: Ավելին, աշուղական երգը հայկական երգարվեստի թանկագին բաժիններից է՝ իր ստեղծագործական արժանիքներով, տառով, ոգով, բազմազան ու խայտարեղ երաժշտությամբ և բեմական-բեմադրական արտահայտչաձևերով: Սա յուրահատուկ ճյուղ է մեր երգարվեստում, որին պետք է տեր կանգնի յուրաքանչյուր հայ, որտեղ էլ որ նա գտնվի: Եվ շատ կարևոր է, որ հայ երգը մատուցվի խմանքով ու բժախնդիր»:

Այդպես խմանքով ու բժախնդրորեն անսամբլը իր ղեկավարի հետ ներկայացնում է յուրաքանչյուր երգանունը ունկնդրի սրտերը լցնելով առիթներով մեղեդիներով:

Հոգևածը եզրափակում ենք հայ ժողովրդի նվիրյալ գավախի՝ Թովմաս Պողոսյանի անկեղծ խոստովանությամբ. «Սայաթ-Նովա անսամբլի գոյությունը համար ներդրել են իմ գիտակցությունը, առողջությունը, երջանկությունը»:

ԱՆԱՅԻՏ ԿԻՐԱՎՈՍՅԱՆ
երաժշտագետ
ԵՊԿ ղոցնետ,



Վարդատոն՝ Երևանում և Թբիլիսիում



ՀԱՄԵՐԻ ԵՎԻՐՎԱԾ ՊՐՈՑԵՍՈՐ ԼԱՐԻՍԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ



Դերասանուհի ժենյա Ավետիսյանը և երգչուհի Լարիսա Մկրտչյանը բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի հետ



Կոնցերտմայստեր՝ Մարգարիտ Սարգսյան, ուսանողուհի՝ Դիանա Դարությունյան, պրոֆեսոր՝ Լարիսա Մկրտչյանի հետ լսարանում, ԵՊԿ, 2012 թ.



Վալերի Դարությունով, Դավիթ Դազարյան Լարիսա Մկրտչյանի հետ Կ. Դարությունովի ԵՊԿ լսարանում, 2012 թ.

1 2018 թվականին լրանում է նաև Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի հիմնադրման 95-ամյակը: Վերջին տարիներին Լարիսա Անդրանիկին ապրում է ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսում և գտնվելով Դայերսթրիմ ցանկացած իրեն նվիրված համերգը նվիրել նաև այդ փաստին, քանի որ ամբողջ մասնագիտական գործունեությունն անցել է (մինչև մեկնելը՝ 2016 թվականը) սիրելի ու հարազատ բուհում: Այս տարվա շրջանակներում կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմը տարաբնույթ մասնագիտական համերգներով հանդես է գալիս իրենց երկարամյա տարիների փորձն ու վաստակը, ուսանողների ձեռքբերումները ի ցույց դնելով ու կիսելով հանրության հետ:

Լարիսա Անդրանիկի 30-ամյա հորեյանական համերգին մասնակցում էին նրա տարբեր ժամանակներում ավարտած և ուսումնառությունը անցկացնող այժմ աշխարհի տարբեր երկրներում, բացի ԵՊԿ-ից, նրա լավագույն սաները:

1999-2009 թվականները և մինչև այսօր համագործակցում է կոնցերտմայստեր Մարգարիտ Սարգսյանի և Քրիստինե Սիմոնյանի հետ: Իր ելույթում Մ. Ա. Սարգսյանը նշեց. «Տարիների ընթացքում մեր մտերմությունը հաղթահարելով շատ փորձություններ թե՛ մարդկային և թե՛ ստեղծագործական իր եզրալուծումը գտավ ամենացորդ ընկերության մեջ: Նրան բնութագրում են նաև պրոֆեսիոնալիզմը, նվիրվածությունը գործին ու հավատարմությունը»:

Լ. Ա. Մկրտչյանն անցել է մասնագիտական լուրջ ակադեմիական կրթություն, ավարտել է նաև միջնակարգ հանրակրթական (77-րդ ռուսական, 1970 թ.), դպրոցը, որը

խորհրդային տարիներին բարդությունների հետ էր կապված: Պետք է շատ լավ, գերազանց սովորել, որպեսզի նման թույլատվություն ունենայիր զուգահեռաբար սովորելու: Նա ավարտել է նաև Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտական դպրոցի դաշնամուրային դասարանը՝ Անահիտ Շաբոյանի ղեկավարությամբ, 1968-ին: Այսինքն, հետագայում երգչուհու մասնագիտությունը ընտրելիս մեծ ազդեցություն ունեցավ նրա նախնական կրթությունը, որպես գործիքային կատարող: Ուսում, որ շատ կարևոր է և անհրաժեշտ բարձրակարգ ու լավ մեներգիչ դառնալու համար: Հետագայում նա սովորել է ավարտել է Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտական ուսումնարանը հիանալի մանկավարժ և նորանշանակ տնօրեն, որն ուսումնարանի հիմնադիրն էր, Մելանյա Արմենակի Չոլախյանի մեներգեցողության, այնուհետև շարունակել է, նրա ասիստենտ Անուշ Մկրտչյանի դասարանը (1974 թ.): Նույն տարին ընդունվում է Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսոր Աննա Միխայելի Սարաջևայի դասարանը և մեծ հաջողություններ արձանագրելով: Տակավին երիտասարդ, որպես դեռատի խաղում է Գիքորի դերերը Գ. Հախինյանի համանուն օպերայում: Նա նաև ասպիրանտուրան է սովորել և ավարտել 1983-ին իր պրոֆեսորի վարպետաց ղեկավարությամբ: Եվ սովորելու տարիներին մասնակցել է համամիութենական մրցույթների ինչպես Անդրկովկասյան մրցույթի դափնեկիր՝ 2-րդ մրցանակ, 1985 թ., կամ Մինսկում Գլինկայի անվ. մեներգիչների մրցույթի դիպլոմանտ դառնում (1981 թ.), որոք այժմ միջազգային բարձր չափանիշներով ի ցույց են դրվում որպես այդպիսիք:

Երկար և անմոռանալի տարիներ Լ. Ա. Մկրտչյանն աշ-



Կոնցերտմայստեր՝ Լուսյա Թունյան, ուսանողի Բեյան պրոֆեսոր՝ Լարիսա Մկրտչյանի ԵՊԿ լսարանում 2012 թ.

խատել է բեմադրիչ Բագրատունու ներկայացումներում: Իր մասնակցությունը բեռնել է ԵՊԿ օպերային ստուդիայի բացման օրվանից, իսկ 1979-ից մինչև 1994 թթ. Բագրատունու գնալուց հետո 1 տարի հետո թողել է այդ աշխատանքը: Նա դերերգել է Կ. Ա. Մոցարտի



Կոնցերտմայստեր՝ Քրիստինե Սիմոնյան, մեներգչուհի՝ Գայանա Դամբարյան



Լիլիթ Խաչատրյան



Կոնցերտմայստեր՝ Մարգարիտ Սարգսյան, Դիանա Դարությունյան, պրոֆեսոր՝ Լարիսա Մկրտչյանի գործունեության 30-ամյակին



ԵՊԿ պրոֆեսոր՝ Լարիսա Մկրտչյանի գործունեության 30-ամյակի հանդիսավոր համերգը Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը նրա տարբեր տարիների շրջանավարտների և ուսանողների համերգ մեծարումը պրոֆեսորին, Երևան, 06.06.2018 թ.



Անի Բաղդոյան, Իտալիա, Դոմի կոնսերվատորիայի մագիստրոսական կրթության 2-րդ կուրսի ուսանող

ՀԱՄԵՐԻ ԵՎԻՐՎԱԾ ՊՐՈՏԵՍՏՈՐ ԼԱՐԻՍԱ ԱՆՔՐԱՆԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ



«Կերպար» միջազգային մրցույթ փառատոնի մենեջերության հանձնախումբ



Կոնցերտմայստեր Մարիաննա Դարուբյունյան, Ռեբեկա Օջախյան, Լարիսա Մկրտչյան, ԱՄՆ



Լուսինն Զաքարյանի հետ, ԱՄՆ



Կարինե Մկրտչյան, Լարիսա Մկրտչյան, Սվետլանա Կոլուսարյան

5 «Այդպես են վարվում բոլոր կանայք» Ֆերոդելիցիի, Մասկանիի «Սանտուցի», Ռախմանինովի «Ալեկո» Ջենֆիրայի գլխավոր դերերգերը: Դասավանդել է ավարտելուց հետո ԵՊԿ-ում սկզբում որպես Ա. Սարաջևայի ասիստենտ, այնուհետև՝ 1995-ից դասախոս, դոցենտ՝ 2009-ից, պրոֆեսոր՝ 2011-ից: Նա եղել է (1989-1994 թթ.) նաև Հայաստանի ազգային պետական ակադեմիական երգչախմբում (Կապպելլայում) մենեջեր: Այնուհետև դրան գլուգահեռաբար նաև Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում մենեջեր: Նրա վաղ ուսանողներից են՝ Տանյա Կոնդրատը, որը գործում է Գերմանիայում,

Դիանա Դարուբյունյան Երևանի Ա. Սպենդիարյանի օպերային թատրոնի մենեջեր, Բլեյան Շուշանը՝ Վիեննայում (Ավստրիա), Անահիտ Պապայանը («Գեղարդ» անսամբլի գեղարվեստական ղեկավար, ՀՀ) և այլոք: Լավագույն ուսանողներից, որոնք նաև մասնակցում էին իրենց ուսուցչի մեծարման համերգին՝ Մանե Դազեայանն է Կոմիտասի անվ. միջազգային փառատոնի դափնեկիր (1-ին մրցանակակիր, Գերմանիա), կատարեց՝ Ա. Դուրխանյանի «Ծիծեռնակը»: Իր չքնաղ ծայնով, նույնիսկ արտաքինով գերեց Գայանե Ղամբարյանը բարդ արիայի հիանալի կատարումով՝ Պուչչինիի՝ Տոսկայի արիան համանուն օպերայից: Նա արտակարգ ծայնային տվյալներ ունի, թավշյա հնչողությամբ, ծա-

վալուն դիապազոնով, թռչչային գեղեցիկ ինտոնացիայով օժտված վաղ անհատականություն: Իտալիայում Հռոմի կոնսերվատորիայի մագիստրոսական կրթությունն է անցնում 2-րդ կուրսեցի Անի Բաղդոյանը: Նա անկնկալ մատուցեց սիրելի դասախոսին կատարելով Պուչչինիի «Բոհեմ» օպերայից Միմիի հանրահռչակ արիան: Պրոֆեսորի վաղ ուսանողներից է Սոֆա Բաղդասարյանը՝ Հ. Պարոնյանի անվ. թատրոնի դերասանուհի, Տ. Չուխաջյանի «Կարինե» համանուն օպերետայի դերակատարն ու Հայաստանի ազգային ակադեմիական կապպելլայի արտիստուհի: Ա. Սպենդիարյանի անվ. ազգային օպերային



Կոնստանտին Սիմոնյան, Վալերի Դարուբյունով, Լարիսա Մկրտչյան



Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հյուրախաղերը, մենեջերներ Գեղամ Գրիգորյան, Հասմիկ Պապյան, Լարիսա Մկրտչյան ԱՄՆ, ԼԱ, 1989 թ.



Իր պրոֆեսորի Աննա Միխայելի Սարաջևայի հետ

ՀԱՏԵՐԻ ԵՎԻՐՎԱԾ ՊՐՈՑԵՍՈՐ ԼԱՐԻՍԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ



Մեներգեցողության ամբիոնի դասախոսները, շրջանավարտները, ամբիոնի վարիչ Տաթևիկ Ազազնորյանի, վոկալ-տեսական միացյալ ֆակուլտետի ղեկան Մարգարիտ Բրուտյանի, ԵՊԿ օպերային ամբիոնի պրոֆեսոր, օպերային ստուդիայի ռեժիսոր (1981-1988 թթ.) Վահագն Բագրատունու հետ



Լարիսա Մկրտչյանի դասարանը՝ կոնցերտմասյուսեր Մարգարիտ Սարգսյանի հետ

6 Թատրոնում երիտասարդ ստաժոր: Նրա կատարմամբ լսեցինք Զ. Բիզեի Միքսելայի արիան «Կարմեն» օպերայից:

Համերգային ծրագիրը ներառում էր հայ կոմպոզիտորների երկեր եվրոպական հանրահայտ արիաներին համընթաց: Է. Արրահամյանի «Աղբյուրի մեջ մի մարալ» կատարեց Շահանե Պրոշյանը, 2-րդ ռոմանսը՝ «Ես հիշում եմ աչքերը քո» մեկնաբանեց շրջանավարտ Գայանե Գրիգորյանը, 3-րդ ռոմանսը՝ Լիլիթ Խաչատրյանը՝ «Ախ ինչ լավ է սարի վրա»: Նա պատրաստվում է մեկնելու Գերմանիա և իր մասնագիտական գործառույթն այնտեղ շարունակելու: Վերոնիկա Թորոսյանը՝ կատարեց Սայաթ-Նովա. «Դու՛ն ե՛ն հուրին իս», Սոնա Սարգսյանը՝ («Ոսկե ձայն» միջազգային մրցույթի դափնեկիր) Կոմիտասի «Կանչե կռունկը»:

Տարբեր ժամանակներում ուսանած Լ. Մկրտչյանի դասարանում երգիչներ էին սովորում՝ Ռաֆայել Աբգարյանը (միջազգային մրցույթի դափնեկիր) կատարեց Մոցարտ «Ֆիգարոյի արիան»՝ «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայից, Բիքսիո՝ «Խոսիլ սիրո մասին», «Մարիունելլա»: Գևորգ Կոչոյանը կատարեց՝ Զ. Վերդի Յերցոգի արիան «Ռիգոլետտո» օպերայից և Լառա՝ Գրանդա:

Նա օպերային թատրոնի երիտասարդ մեներգիչների հետ համագործակցել է և անցել վարպետության դասեր: Մարիամ Մնացականյանը կատարեց Զիլեայի Արքայադստեր արիան «Ադրիեննա Լեկուվրեր» օպերայից, Մարինա Յովհաննիսյանը՝ Պուչչինիի «Մադամ Բատերֆլայի» վերջին տեսարանը համանուն օպերայից: Օվսաննա Ղազարյանը, նույնպես միջազգային մրցույթի դափնեկիր, կատարեց՝ Սանդրո Վալիի «Sin tu amor»: Հոբեյանական համերգը եզրափակեց արդեն ունկնդրի կողմից սիրված Երևանի օպերային թատրոնի մեներգչուհի Դիանա Հարությունյանն ուն ցանկացած մեկնաբանում հիացմունք է առաջացնում իր կերպարային կերտումի լրջամիտ մոտեցումներով, դիկցիայի հիանալի տիրապետմամբ, որը ցավոք ոչ լավ հիմքերի վրա է դրված շատ երգիչների մոտ: Պետք է նշել, որ հենց այդ առումով առանձնանում են Լ. Ա. Մկրտչյանի դասարանի սաները, որոնք տիրապետում են խոսքի կուլտուրայի



Լարիսա Մկրտչյան, Անահիտ Պապայան, Մարգարիտ Սարգսյան

ղեկամացիայի արվեստին: Դա իհարկե երգչական դպրոց ասածի վկայությունն է, որը պրոֆեսորը ժառանգել է Աննա Սարաջևայի դպրոցից: Հանրապետական մրցույթների դափնեկիր Դիանա Հարությունյանն ավարտեց համերգային ծրագիրը Զ. Դոնիժետտիի «Պոդիկտոս» օպերայից՝ Պաուլինայի տեսարանի կատարումով:

ԳՐԱՐ ՀԱԳՈՅԱՆ Երաժշտագետ

ԱՄԵՆԱՄՅԱ REFUFEST ՓԱՌԱՏՈՆՆ՝ ՕՏԱՐԱԶԳԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ և ԽՄԲԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Ալվինա Աղաջանյան

Հունիսի 9-ին Պրահայում տեղի ունեցավ ամենամյա Refufest փառատոնն՝ օտարազգի երաժիշտների և խմբերի մասնակցությամբ: Հայաստանը ներկայացրեց Ալվինա Աղաջանյանը (նրանք բոլորը, հիմնականում Հայաստանից արտագաղթած, Չեխիայում բնակվող հայրենակիցներն են), իր իսկ ղեկավարած մանկական խմբով, որն իր հերթին բաղկացած է նույնպես տարբեր ազգերի



Պրահայում մանկական երգեցիկ խումբ, ղեկավար՝ Ալվինա Աղաջանյան

երեխաներից և հայկական շաբաթօրյա դպրոցի պարի խումբը (ղեկավար Անժելա Մելքոնյան): Նրանք միասին սերտ համագործակցում են: «Շատ ջերմ ընդունվեց մեր ելույթը, եզրափակեցինք մեր ավանդական շուրջպարով և հրավիրեցինք հանդիսատեսին միանալու: Տիրում էր շատ ջերմ մթնոլորտ, բոլորս շատ ոգևորված և հպարտ էինք մեր երկիրը հավուր պատշաճին ներկայացնելու համար».

իսկույն է իր տպավորություններն Ալվինա Աղաջանյանը:

Խմբագրական նյութը տրամադրել է Ա. ԱՐԱՋԱՆՅԱՆԸ (Չեխիա՝ Պրահա)



Պրահայի խումբ, ղեկավար՝ Անժելա Մելքոնյան

Քանոն ժողովրդական երաժշտական գործիքի դերը կրթական համակարգում և կատարողական արվեստը տարածաշրջանում

Այդ տարիներին Հասմիկ Լեյլոյանը մի այնպիսի հեղափոխություն կատարեց քանոնի կատարողական արվեստի ասպարեզում, որն ընդունվեց և գերեց ոչ միայն հայաստանյան, այլև օտարերկրյա ունկնդրին:

Եվ պատահական չէ, որ Հասմիկ Լեյլոյանը 1974-1990 թթ. եղել է Հայֆիլհարմոնիայի և «Մյուզկոլոգներտ»-ի միակ մենակատար քանոնահարը, այնուհետև 1990-1996-ին ՀՀ Հանրային ռադիոյի էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի մենակատարը:

Համերգներով ելույթներ է ունեցել ավելի քան հիսուն երկրներում՝ Շվեդիայի Ստոկհոլմի թագավորական պալատում (2009թ.), Աբու-Դաբիի էմիրությունների պալատում (2010թ.) Կանադայի Տորոնտո և Մոնրեալ քաղաքներում (1993 թ., 1994 թ., 2003 թ., 2013 թ.) Բահրեյն-Մամանա համերգային մեծ դահլիճում (2012 թ.), Օմանի՝ Մասկաթի Ռոյալ օպերային թատրոնում (2013 թ., 2015 թ.) և այլ պատվաբեր բեմերում:

Հայ կոմպոզիտորական մշակույթում արդեն իր բարձր աստիճանն էր զբաղվել հաջատուր Ավետիսյանի արվեստը, նրա պրոֆեսիոնալիզմը քանոն երաժշտական գործիքի համար ստեղծված երկացանկով, սկսած պիեսներից ավարտված ցիկլային ժանրերով և Կոնցերտներով քանոնի, տարբեր կազմի նվագախմբերի համար: Այդ տարիներին շնորհիվ անվանի կոմպոզիտորի, կոմսերվատորիայում ստեղծվում է ժողովրդական գործիքների բաժին (չկար մինչև 1978 թ.):

Շարունակելով հայկական քանոնի ավանդական դպրոցը և նրա զարգացման ուղիները Հասմիկ Լեյլոյանը բերեց իր նոր խոսքը և ժամանակի թարմ շունչն ու հոգին:

«Անցնելով կատարողական բարդ ուղի՝ ի՞նչ ճանապարհ էք տեսնում, որպեսզի հայկական քանոնը չկորցնի իր դերը մեր օրերում և ներկայումս ամբողջ աշխարհին իրեն ինքնատիպ ասելիքով:

Շատ հետաքրքիր է, որ ես և իմ սերունդն ասպրեցինք մի քանի Նոր Հայաստան: Իհարկե դժվար է անմիջապես գտնել, թե ինչ է պահանջվում այդ նոր իրավիճակներում, բայց փաստը մնում է այն, որ ժամանակն իրենը թելադրում է և եթե ժողովրդական գործիքները չկատարելագործվեն իրենց արտահայտչամիջոցներով և կատարողական հնարավորություններով, ապա դրանք չեն կարող ասպրել դարեդար: Միևնույն ժամանակ չպետք է այդ միտքը շփոթել այն փաստի հետ, որ այսօր որոշ քանոնահարներ վերցնում են այլ ազգերի արարքական, թուրքական կամ պարսկական նվագելաձևերը, օգտագործում և ներկայացնում որպես նորարարություն կամ զարգացում իրենց կողմից:

Իմ ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում հետևել եմ ժամանակի շունչը զգալու, գործիքի կատարելագործմանը և կատարողական արվեստի զարգացմանն ու իմ ուսանողներին դասավանդելու ու դաստիարակելու եմ այդ ոգով և նրանք գործում են ոչ միայն Հայաստանում, այլև տարբեր երկրներում՝ Ֆրանսիայում, Հունգարիայում, ԱՄՆ-ում, Պարսկաստանում (Չեխարան), Լիբանանում (Բեյրութում) և այլուր:

Որպես իմ նոր խոսքը արվեստում՝ երաժշտական ասպարեզում եղավ փոխադրումները, կատարողական նոր ձևերի ստեղծում և եվրոպական դասական ստեղծագործությունների կատարումները քանոնով:

Սկսած երաժշտական դպրոցից ես կատարել եմ փոխադրումներ քանոնի համար, եղբորս՝ երաժիշտ Արտաշես Լեյլոյանի օգնությամբ և հետագայում արդեն ինքնուրույն:

Ձեր ուսումնառության ընթացքում ինչպիսի՞ գարգացումներ են եղել այդ ասպարեզում:

Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում իմ սովորած տարիներին, ժողովրդական գործիքների բաժինը ղեկավարում էր Ալեքսանդր Շահբազովը, ով հիանալի երաժիշտ էր ու նույնպես քաջալերում էր այդ փոխադրումների միտքը և իմ միջոցով կատարվեցին փոխադրումներ: Այսօր, ընտրվելով ստեղծագործություններ գրված տարբեր գործիքների համար, ես նվագում էի և լսում էիք, որը կինչի քանոնով, որը՝ ոչ: Եվ այսպես Ա. Շահբազովն իմ օգնությամբ ստեղծեց մի ժողովածու, որտեղ ընդգրկված էին հայկական և եվրոպական դասական ստեղծագործություններ: Ժողովածուն

տպագրվեց և գնահատվեց: Դա շատ մեծ առաջընթաց էր քանոնի դասավանդման, երաժշտական կրթության ու համերգային ծրագրերի ասպարեզում:

Հետագայում, արդեն ինքնուրույն, ես նորից անդրադարձա այդ և այլ դասական բազմաթիվ ստեղծագործությունների և փոփոխություններ կատարելով՝ նախկին արվածն ավելի ընդլայնեցի՝ քանոնով նվագելու հնարավորությունները: Այդպիսի համաշխարհային դասական ստեղծագործությունների կատարումները դարձան իմ երկու բաժնից կազմված առաջին մենահամերգի ծրագիրը, 1974 թ.:

Այս փոխադրումները շատ կարևոր էին կրթական համակարգում սովորեցնելու և ծանոթացնելու ազգային, հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից բացի, նաև եվրոպական դասական երաժշտական ստեղծագործություններին, քանի որ այն հղկում և կատարելագործում էր կատարող երաժիշտի ծաշակը և կատարողական տեխնիկան:

Որո՞նք են հայկական քանոնի առանձնահատկությունները:

Քանոնն արևելյան գործիք է և մեծ տարածում ունի արաբական աշխարհում՝ Եգիպտոսում, Սիրիայում, Ալժիրում, Թունիսում, Լիբանանում (Բեյրութ), ինչպես նաև Թուրքիայում, Պարսկաստանում, Հունաստանում: Սակայն հայկական քանոնը տեմպերացված է, իր ուրույն տեղն ունի և տարբերվում է այլ ազգերի քանոններից՝ իր ինտոնացիոն հնչողությամբ, լադային կառուցվածքով, երաժշտական արտահայտչամիջոցներով, տեխնիկայի կատարողական ոճով և ձևերով, որը չի նմանվում այլ ազգերի քանոններին և ավելի հայկական է՝ իր հնչողությամբ:

Իմ այսքան տարիների մոտ հիսուն տարի համերգային և դասավանդման գործունեության ընթացքում ես պահպանել եմ կատարողական արվեստի և հայկական քանոնի տեսակը, որպեսզի չխառնվի այլ ազգերին: Դա է պատճառը, որ այսքան տարի ինձ գնահատում և հրավիրում են տարբեր երկրներից մենահամերգներին՝ որպես հայկական քանոնը ներկայացնող, ոչ թե իրենց ձևով նվագողի կամ կրկնօրինակողի:

Այսօր կան մարդիկ, որոնք վերցնում են այլ ազգերի նվագելաձևեր և ներկայացնում մեր երկրում՝ իբր իրենց կողմից նորարարություն: Դա ամոթ է և մեծ վտանգ:

Ես կարծում եմ՝ հայ ազգն ունի այնքան ինքնուրույն մտածելակերպ, տաղանդ և ճաշակ, որ պետք չէ ընդօրինակել արաբական, թուրքական, պարսկական նվագելաձևերը և քանոնը դարձնել կոպի մեր երաժշտական դեմքը, որը ժամանակին մաքրել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, սկադեմիական կրթությամբ հայեցի և կոմպոզիտոր մտածելակերպի կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանը և փոխանցել սերունդներին, իսկ այժմ այն խեղաթյուրվում է՝ վերցնելով և խառնելով մեր կատարողական մաքուր նվագելաձևերին այլ ազգերի նվագելաձևերը, որը հետագայում կարող է փաստի առաջ կանգնեցնել մեր ազգային երաժշտական անցյալը և պարզվի, որ մենք չունենք մեր դեմքը և վերցրել ենք կամ փոխառել այլ ազգերից:

Մասունքով նվագելու ձևը դա նորություն չէ: Ուղղակի կա հայկականը, ոչ թե այլ ազգերից վերցված կատարողական զարգացման տեխնիկան: Ովքեր չգիտեն, կարող են վերցնել Հ. Լեյլոյան «Գամմա, Արպեջո. Վարժություններ և էտյուդներ տեխնիկայի զարգացման դասագիրքը» և սովորեն, որ գրքում գետնեղված այդ և այլ կատարման նոր ձևերով գրվել են տասնյակ էտյուդներ, պիեսներ և փոխադրումներ, կոմպոզիտորների և որոշ քանոնահարների կողմից:

1982-2010 թթ. կոմսերվատորիայում դասավանդել եմ նաև մանկավարժական պրակտիկան, որտեղ այդ տարիներին ավարտող քանոնահարները ծանոթացել և սովորել են տեխնիկայի զարգացմանը վերը նշած դասագրքով և ծանոթ են այդ նոր նվագելաձևերին դեռ այդ տարիներից:

Տիկին Լեյլոյան Դուք ստեղծել և հրատարակել եք բազմաթիվ դասագրքեր: «Փոխադրումներ քանոնի համար» (հրատ. 1987 թ., 1990 թ., 1995 թ., 2013 թ.), «Գամմա, Արպեջո.

Վարժություններ և էտյուդներ» Նոր կատարման ձևերի և տեխնիկայի զարգացման դասագիրք քանոնի համար (հրատարակված 1990 թ., այն մի քանի անգամ ընդլայնվել և վերահրատարակվել է 2009 և 2013 թթ.), «Քանոնի հայկական դպրոց» առաջին և երկրորդ մաս նախատեսված երաժշտական դպրոցների և քոլեջների համար, «Քանոնի համերգային ծրագիր» ժողովածուն, «Ճնշող երկեր» եվրոպական դասական ստեղծագործությունների ժողովածուն, «Սիրված մեղեդիներ» ժողովածուն, երաժշտական դպրոցների գեղագիտական բաժնի ուսուցման համար, «Քո հոգու երգը» համերգային ստեղծագործությունների ժողովածու, CD-ի հետ միասին 2018 թ.:

Ինչպես նաև ունեք ձայնագրություններ Հանրային ռադիոյի Ոսկե ֆոնդում և թողարկ



Հասմիկ Լեյլոյանի հրատարակություններն ու թողարկած լազերային ձայներիզները

կել եք ձայնակազմակերպչական «Ձարթոնք», «Վերադարձի սիրելի», «Թռչի՛ր, իմ սիրտ», «Աշխարհի շուրջ», «Կուլած» և «Նոյստալգիա» երկմասնիկ ձայնակազմակերպչական կոնցերտներից և «Ձեր համերգային կոնցերտը կատարումները (1970-2000-ական թթ.) ձայնագրված տեղափոխված CD-ի վրա, ինչպես նաև «Ոսկե ձայներ» և «Վերադարձի» DVD-ները:

Իսկ ինչպիսի՞ մեթոդական աշխատանքներ եք կատարել այս տարիների ընթացքում:

Այս տարիներին ստեղծել, գրել եմ մեթոդականություն և դասախոսել եմ նաև կոմսերվատորիայի կատարողական արվեստի պատմության, տեսության և նրա դասավանդման մեթոդիկայի, մանկավարժության ամբիոնում (հրավիրվելով ամբիոնի վարիչ, պրոֆ. Շուշանիկ Հարությունի Ավոյանի կողմից): 2005-2009 թթ. Մշակութային կրթության աջակցության հիմնադրամում որպես մեթոդիստ-մանկավարժ: Սկսած 1970-ից մինչև օրս իմ գիտելիքները տարածել եմ անցկացնելով բազմաթիվ վարպետության դասեր և ներկայացնելով մեթոդական գեղեցուկներ հանրապետության մարզային երաժշտական դպրոցների ուսուցիչների (ինչպես նաև անհատական դասեր նրանց հետ) և սաների համար:

Նրա գործունեության և աշխատանքների շնորհիվ, այսօր քանոնի դասավանդումը և մեթոդիկան դրված է ուսուցման բարձր հիմքերի վրա:

Ուրախ եմ, որ իմ այսքան աշխատանքը իզուր չի անցել և այսօրվա դասավանդող քանոնահարներն աշխատում են իրենց աշակերտներին ներկայացնել տարբեր մրցույթներում և փառատոներում, Հայաստանում և արտերկրում, շարունակելով Նոր կոյներ հաղորդել մեկնաբանումներին: Գովելի է, որ դասավանդող քանոնահարները՝ զգալով ժամանակի շունչն ու պահանջը, փորձում են քանոնը ներկայացնել և շարունակել զարգացնել այն:

Տիկին Լեյլոյան ինչպե՞ս եք պատկերացնում քանոնի ապագան և Ձեր մասնակցությունը միջազգային փառատոներին ինչպե՞ս է նպաստում դրան:

Ես գտնում եմ, որ քանոնի ապագան շատ պայծառ է, այն շարունակվում է զարգանալ և ընդունվում է տարբեր երկրներում որպես հայկական քանոն: Կարծում եմ, որ եթե քանոնի զարգացումը չունենար անցյալ, չէր ունենա և ապագա: Այսօր քանոն երաժշտական գործիքը շատ սիրված և ընդունված է երիտասարդների կողմից:

2010 թ. Սիրիայի Մշակույթի նախարարի հատուկ հրավերով ես մասնակցեցի «Մետաքսի ծանապարհ» («Silk road») միջազգային փառատոնին, որտեղ մասնակցում

էին Չինաստանից, Մարոկկոյից, Թուրքիայից, Արաբական էմիրություններից, Թունիսից, Իրանից, Իրաքից, Իսպանիայից ճանաչված և սիրված լավագույն ժողովրդական գործիքներ կատարողներ և երգիչներ: Դա մի գեղեցիկ և իմաստալից փառատոն էր իր ձևի մեջ: Եվ ես մտածեցի, որ Հայաստանը լինելով Մետաքսի ճանապարհի երկրներից մեկը, ունենալով Սելիմի լեռնանցքի Քարվանսարայի պատմական շինություններ՝ ապացույցը, որ Մետաքսի ճանապարհը անցել է Հայաստանով և այսքան տարիներ ինչու ոչ մի մշակութային անդրադարձ այդ փաստին չի եղել: 2014 թ. նախաձեռնեցի ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ «Երկխոսություն. Մետաքսի Մեծ ճանապարհին» երաժշտական փառատոնը, որը Հայաստանում կազմակերպվեց և անցկացվեց առաջին անգամ: Փառատոնին մասնակցեցին Չինաստանից, Հնդկաստանից մինչև Հայաստան Մետաքսի ճանապարհի երկրներից ընտրված երաժիշտներ: Փառատոնի համերգն անցավ բարձր մակարդակով, ներկայացվեց տարբեր ազգերի ազգային երաժշտական գործիքներ և երաժշտություն: Ինչպես Մետաքսի ճանապարհն ստեղծվել է և եղել է ազգերի մեջ առևտրական կապերի զարգացման և համագործակցության հեռանկար, այնպես էլ բեմին ցուցադրվեց մշակութային կապերն ու երաժշտական մշակութային քաղաքակրթությունը՝ տարբեր ազգերի երաժիշտների նվագախմբային կատարումներով: Երկրում սկսվեց հայկական «Օտար, ամայի ճամփեքին»

երաժշտությամբ և ավարտվեց դասական օրինակով Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետից պարային երաժշտությամբ, որտեղ մասնակցից ազգային ներկայացուցիչները ինձ հետ միասին կատարեցին այդ ստեղծագործությունները: Համերգը վերածվել էր մի հոյակապ միջազգային տոնի: Գաղտնիք չէ, որ հայ ունկնդրին շատ դժվար է զարմացնել կամ հիացնել: Ուրախ եմ, այն ստացվեց ինձ մոտ ու «Մետաքսի ճանապարհի» հանդիսատեսը հիացած էր, քանի որ շատ նոր երաժշտական գործիքներ և՛ տեսավ և՛ ունկնդրեց, ծանոթացավ տարբեր ազգերի ազգային երաժշտությանը, յուրահատուկ տեմբրային և անսովոր հատուկ կատարումներին, որ երբեք չէին լսել և տեսել Հայաստանում: Երկար ժամանակ ինձ շնորհակալություն էին այդ փառատոնի կազմակերպման և անցկացման համար: Հենց համերգին ես արժանացա Երևանի քաղաքապետի «Ոսկե մեդալին», երկար տարիներ արվեստին ծառայելու և բարձր մակարդակով արտերկրում հայկական արվեստը ներկայացնելու համար:

Համերգային առեւի ծավալում Ձեր գործունեության և բազմաթիվ միջազգային փառատոների մասնակցության շնորհիվ հայկական քանոնը ճանաչվեց, ընդունվեց և սիրվեց աշխարհի շատ երկրներում: Եվ դրա վառ ամենամեծ և լայն ճանաչում գտած միջազգային փառատոնը:

Գիտեք, որ այս տարի անցկացրեցի բազմաթիվ փայլուն համերգներ Դազախստանի Կարաբաղի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր Պ. Գրիբանովի ղեկավարությամբ: Այնուհետև Նյու-Ջերսիի «Շուշի» պարաֆիլարմոնի հետ համերգում համերգ, որից հետո մեկնեցիք Արգենտինա, որտեղ՝ Բուենոս-Այրեսում Ֆրանսիայի դեսպանատանը, տեղի ունեցավ համերգ Ֆրանկոֆոնիայի շրջանակներում, այնուհետև Կորդոբայում մի շարք վարպետության դասեր անցկացրեցի «Վիտա Մարիա» Արվեստի և երաժշտության համալսարանում և Բուենոս-Այրեսի Արվեստի ակադեմիայում, ինչպես նաև համերգ Ուրուգվայի մայրաքաղաքում՝ Մոնտեվիդեոյում:

Թվականներ կարելի է շարունակել քանի որ տեղյակ եմ տարվա Ձեր բուն համերգային շրջապայությունների մասին նաև մեր ամառաբերի էջերից: Մեզ մնում է միայն հաջողություններ մաղթել Ձեր համերգային, մանկավարժական, հասարակական և ստեղծագործական գործունեություններում:

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 14-ՐԴ ՄՐՑՈՒՅԹ

Հունիսի 6-ին Արամ Խաչատրյանի ծննդյան օրը, հայ մեծանուն կոմպոզիտորի 115-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շրջանակներում մեկնարկեց կոմպոզիտորի անունը կրող 14-րդ միջազգային մրցույթը՝ թավջութակ մասնագիտությամբ: Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ Մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը: Բացման, ինչպես նաև ամփոփիչ գալա-համերգները հիանալի վարեցին հայտնի ջութակահար Կարեն Շահապույանը և հանրահայտ դաշնակահարուհի Արմինե Գրիգորյանը:



Քշիշտոֆ Պենդերեցկի, Ա. Խաչատրյանի միջազգային 14-րդ մրցույթի 1-ին մրցանակակիր՝ Ջոնաթան Սվենսեն

«Այս մրցույթի կարևորագույն նպատակը Խաչատրյանի արվեստի հանրահռչակումն է: 14 տարվա ընթացքում մենք 1000 հայտ ենք ունեցել, ինչը նշանակում է, որ առավելագույնը երաժիշտ ծանոթացել է Խաչատրյանի արվեստին, սովորել է նվագել նրա ստեղծագործություններից որևէ մեկը: Մրցույթի կարևորագույն ձեռքբերումներից մեկն էլ հետագայում հանրահայտ դեպքեր ունենալն է: Լավագույն օրինակը Նարեկ Հախնազարյանն է, որն ուղիղ 12 տարի առաջ դարձավ խա-

կրում Խաչատրյանի անվան մրցույթի հաղթողի տիտղոսը: Շատ լավ հիշողություններ ունեն, ուշադիր հետևում են մրցույթին և ուրախանում նրա առաջընթացով ու հաջողություններով»:

Նշենք, որ մրցույթին, որը բաղկացած էր նախընտրական լուսններից և 3 փուլից, կարող էին մասնակցել 16-32 տարեկան թավջութակահարները: Գեղարվեստական մասի պատասխանատու Սարգիս Բալթաբայանի խոսքով. «Մրցույթի այս տարվա պարտադիր ծրագրում ներառված էին Ա. Խաչատրյանի մենամուտային թավջութակի համար Սոնատ-Ֆանտազիան և ըստ ընտրության՝ թավջութակի Կոնցերտը կամ Կոնցերտ-ռապսոդիան»:

Մրցույթի հանձնախմբի նախագահը Միջհայկյան պետական համալսարանի պրոֆեսոր, լարային գործիքների ամբիոնի ղեկավար Սուրեն Բագրատունին էր: Հանձնախմբի անդամները հեղինակավոր մասնագետներ էին, որոնք ժամանել էին տարբեր երկրներից: Մրցույթի պատվավոր նախագահն էր լեհ կոմպոզիտոր, դիրիժոր Քշիշտոֆ Պենդերեցկին, ով մասնակցեց 3-րդ փուլի լուսններին, մրացանակաբաշխությանը և գալա-համերգին. «Մի-րելի բարեկամներ, սիրելի երաժշտասերներ, լավագույն բարենադասանքներս Արամ Խաչատրյանի անվան 14-րդ միջազգային մրցույթի մասնակիցներին և հեղինակավոր հանձնախմբի անդամներին: Ես հատկապես երախտապարտ եմ, որ ստացել եմ գործադիր տնօրենի ջերմ հրավերը՝ մասնակցելու 2018 թվականի թավջութակահարների մրցույթին՝ որպես հանձնախմբի պատվավոր նախագահ»:

Ամհամբերությամբ սպասում են Հայաստան վերադարձիս, որպեսզի մասնակցեմ հունիսի 12-ին և 13-ին կայանալիք 3-րդ փուլին, և հունիսի 14-ի մրցանակաբաշխությանը և գալա-համերգին:

Ես և կինս միշտ հատուկ ջերմությամբ ենք հիշում Մասեստրո Արամ Խաչատրյանի հետ հանդիպումը, ում մենք նաև պատիվ ենք ունեցել հյուրընկալելու: Լեհաստանում և իմ հայրենի Կրակովում: Նա միշտ մեր հիշողության մեջ կմնա, որպես մեծանուն ու շատ ջերմ անձնավորություն, ինչպես նաև մեծ արտիստ», - գրել է Ք. Պենդերեցկին:

Հունիսի 14-ին ամփոփիչ գալա-համերգի ընթացքում հայտարարվեցին Խաչատրյանի 14-րդ միջազգային մրցույթի հաղթողի և մրցանակակիրների անունները:

Խաչատրյանական մրցույթի հաղթողի պատվին արժանանալու համար պայքարեցին 9 երկրի 16 երաժիշտներ:

1-ին մրցանակի արժանացավ Ջոնաթան Սվենսենը (Դա-



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան, Աննա Տեր-Հովհաննիսյան (Ա. Խաչատրյան մրցույթի տնօրեն), ՀՀ վարչապետի տիկինը՝ Աննա Հակոբյան, Արմեն Ամբաստյան, ՀՀ Նախագահ Արմեն Սարգսյան և տիկինը՝ Նունե Սարգսյան



Կարեն Շահապույան, Լիլիթ Մակունց, Արմինե Գրիգորյան, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ

նիս), 2-րդ մրցանակը ստացավ Ֆյոդոր Ամոսովը (Ռուսաստանի Դաշնություն), իսկ 3-րդ տեղը գրավեցին Ռուստեն Խամիդովը (Ռուսաստանի Դաշնություն) և Չի-Ուոն Հոնգը (Կորեայի Հանրապետություն): Ծնորիվեցին նաև մի շարք հատուկ մրցանակներ. «Մրցույթի լավագույն կոնցերտմայստեր» անվանակարգում մրցանակ հանձնվեց պրոֆեսոր Արմեն Բաբախանյանին: «Հանդիսատեսի համակրանք» մրցանակը ստացավ Չի-Ուոն Հոնգը: Վասիլի Ստեփանովին (Ռուսաստանի Դաշնություն) հանձնվեց հատուկ մրցանակ՝ Արամ Խաչատրյանի Սոնատ-Ֆանտազիայի լավագույն մեկնաբանության համար: Լյուդվիգ վան Բեթհովենի անվան ասոցացիայի նախագահ, Ջատկի փառատոնի ղեկավար տնօրեն, Խաչատրյանի միջազգային մրցույթի հոգաբարձուների խորհրդի անդամ Էլժբետա Պենդերեցկյան հատուկ մրցանակ հանձնեց Չի-Ուոն Հոնգին՝ Լյուդվիգ վան Բեթհո-



Նարեկ Հախնազարյան, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Սերգեյ Ամբաստյան

չատրյանական մրցույթի հաղթող»,-Արամ Խաչատրյանի 14-րդ միջազգային մրցույթին նվիրված ասուլիսում նշել է մշակույթի փոխնախարար Ներսես Տեր-Վարդանյանը:

Մրցույթի բացման արարողությանը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ գերազանց կատարմամբ հանդես եկավ աշխարհահռչակ թավջութակահար Նարեկ



Դիրիժոր Սերգեյ Ամբաստյան, ՀՀ Նախագահ Արմեն Սարգսյան, թավջութակահար Նարեկ Հախնազարյան

Հախնազարյանը: Նա իր խոսքում նշեց, որ տարիներ առաջ Խաչատրյանի մրցույթի Ոսկե մեդալն իր կյանքի առաջին կարևորագույն հաղթանակն է եղել. «Հաղթանակը Հայրենիքում, հիարկե, մեծ պատիվ էր, և մինչ օրս մեծ պատիվ եմ



Հյուրերին և երաժշտական հանրությանը հյուրասիրում էին նախասրահում, կոմպոզիտոր Ն. Ջարիֆյան, երաժշտագետ Գ. Շազոյան

վենի թավջութակի և դաշնամուրի Սոնատի լավագույն մեկնաբանության համար: Տրվեցին նաև այլ հատուկ պարգևներ: Խաչատրյանական մրցույթի հանձնախմբի պատվավոր նախագահ Քշիշտոֆ Պենդերեցկին խոստովանեց, որ իր համար անկանխատեսելի էր մասնակիցների մակարդակը. «Բոլոր երաժիշտները ֆանտաստիկ էին, հիասքանչ: Նրանց կատարումները շատ լավն էին: Մրցույթը բարձր մակարդակով էր կազմակերպված»:

Հանձնախմբի նախագահ Սուրեն Բագրատունին, ամփոփելով մրցույթի արդյունքները, նկատեց, որ շատ բարձր որակի երաժիշտներ էին ելել, եզրափակչի բոլոր չորս մասնակիցները շատ լավ հանդես եկան. «Ինձ թվում է՝ մեր հանձնաժողովը շատ հեշտությամբ ընտրեց հաղթողին: Շատ հետաքրքիր երաժիշտներ են, մեծ ապագայով: Եթե հետևեք նրանց ճակատագրին, կտեսնեք, որ մեծ հեռանկար են ունենալու: Բոլոր մասնակիցները սովորեցին Արամ Խաչատրյանի երկու ստեղծագործությունները, շատ կարևոր է դա: Սա շատ լավ առիթ էր: Այսպես կարելի է պրոպագանդել Արամ Խաչատրյանի երաժշտությունը», - ասաց Սուրեն Բագրատունին:

1-ին մրցանակակիր Ջոնաթան Սվենսենը, գալա-համերգին ելույթ ունեցավ մրցույթի պաշտոնական Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ, կատարելով Ա. Խաչատրյանի ստեղծագործությունները: Նա անկեղծորեն խոստովանեց, որ շատ հոգնած է, քանի որ աշխատանքով, հույզերով հագեցած շաբաթ է ունեցել:



Արամ Խաչատրյանի միջազգային 14-րդ մրցույթի հանձնախումբ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 14-ՐԴ ՄՐՑՈՒՅՑ



Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Սերգեյ Սմբատյան

Բայց նաև շատ տպավորված է ու երախտապարտ բոլորին հանձնախմբին, մրցույթի կազմակերպիչներին, հանդիսատեսին, այն ամենի համար, ինչ այս ընթացքում տեղի ունեցավ: Երիտասարդ թավջութակահարը նաև ընդգծեց Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ու նրա ղեկավար Սերգեյ Սմբատյանի դերը. «Հրաշալի դիրիժոր ունեք, շատ երջանիկ էի աշխատել նրա հետ», - ասաց Սվենսենը:

Փալա-համերգի ընթացքում ելույթ ունեցավ նաև Խաչատրյանի 13-րդ միջազգային մրցույթի երկրորդ մրցանակակիր Ազամատ Ժելտիրգուզը (բարիտոն):

Փակման համերգին ներկա էր ՀՀ Նախագահը և տիկին Նունե Սարգսյանը, ում հովանու ներքո

իրականացվում էր մրցույթը: Այն կյանքի է կոչվել ՀՀ մշակույթի նախարարության, «Արամ Խաչատրյան-մրցույթ» մշակութային հիմնադրամի և Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի համատեղ ջանքերով: Գործընկերներ էր ԱՊՀ Հունանիտար համագործակցության միջպետական հիմնադրամը (ՄՓԳ):

Նշենք, նաև, որ մրցույթը 2013 թվականից Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (World Federation of International Music Competitions) անդամ է, հայկական միակ մրցույթն է, որ արժանացել է նման պատվի և անցկացվում է համաշխարհային այս կառույցի չափորոշիչներով:

Խմբագրական

Ելույթը քաղված է

<http://galatv.am/hy/culture-history/14-23/կալիփղ>

լուսանկարները՝ նաև Գ. Շապոյանի

Эстонские акценты “Ереванских перспектив”

Открытие в июне этого года 19-го сезона международного музыкального фестиваля “Ереванские перспективы”, основателями и бессменными руководителями которого являются композитор Степан Ростомян (арт-директор) и пианистка Сона Ованесян (исполнительный директор), было связано с приездом двух ведущих коллективов из Эстонии: Национального симфонического оркестра Эстонии во главе с маэстро Нееме Ярви и ансамбля старинной музыки “Hortus Musicus” под руководством Андреса Мустонена. Выступление оркестра в столичном концертном зале “Арам Хачатурян” посвящалось 100-летию образования первых республик Армении и Эстонии, а концерт ансамбля на живописном фоне интерьера древнего храма “Звартноц” близ Еревана (“Храм бдящих сил”, VII век) ознаменовал старт Года европейского культурного наследия, инициированного постоянной Делегацией Европейского Союза в Армении во главе с послом г-ном Петром Свитальским.

Армяно-эстонские культурные связи и в прошлом, и сейчас привлекают не столько интенсивностью, сколько своей значимостью. В Ереван приезжали Камерный хор Эстонской филармонии под руководством Тыну Кальюсте, дважды выступал, уже в рамках “Ереванских перспектив”, Эстонский национальный мужской хор под руководством Микка Юлеоя. В Армении звучала музыка Вельо Тормиса, Арво Пярта, Раймо Кангро, Лео Сумеря (автор присутствовал на ереванской премьере своей Симфонии и камерных сочинений). Армянская музыка тоже “экспортировалась” в Таллин. Государственный симфонический оркестр Армении под руководством Давида Ханджяна исполнял Четвертую симфонию Авета Тертеряна и “Ночную музыку” Тиграна Мансуряна во время гастролей 1980 года (кстати, в 1978 году Ханджян дирижировал Государственным симфоническим оркестром Эстонии). На репрезентативном фестивале советской музыки в Таллине в 1983 году армянскую музыку представил Камерный хор Телерадио Армении во главе с хородиректором Арутюном Топикяном: кантата “Песни Тарона” Эмина Аристанкесяна, хоровые обработки народных песен Эдгара Оганесяна, песню Роберта Амирханяна. (Позже, в 1991 году на международном певческом фестивале в Таллине Топикян дирижировал многотысячным сводным хором.) На симфонических концертах фестиваля звучали Флейтовый концерт Александра Арутюняна и “Ночная музыка” Мансуряна, камерную музыку – Квартет N 2 Левона Чаушяна – исполнил приглашенный Ереванский струнный квартет.

В свете сказанного понятна важность нынешних гастролей музыкальных коллективов Эстонии, концерты которых полярно дополняли друг друга: Симфонический оркестр выступил в амплу академической классики, ансамбль же – творческой импровизации. Аналогичный контраст составили персоны дирижеров. Строгая мысль Нееме Ярви воплощает собой каноничность искусства, отсюда просистекает сдержанная манера дирижирования, при которой весь комплекс музыкальных жестов направлен на продуктивное выявление дифференцированного по тембру оркестрового фониэма. Фантазия Андреса Мустонена заряжена креативностью искусства ранних эпох, когда исполнителю предоставляется свобода в выборе формы, в приемах варьирования и комбинирования музыкально-поэтических текстов. Средневековые и ренессансные принципы музицирования, симультанность функций солиста и дирижера диктуют Мустонену соответствующую пространственную координацию между исполнителями (в ансамбле 10 человек), сценическую подвижность и близкий театральному артистизм.

Программа Национального симфонического оркестра Эстонии включала два неравнозначных произведения из классики XX века. Это Второй фортепианный концерт Артура Лембы (1885–1963), известного у себя на родине пианиста и композитора, и Пятую симфонию си минор Эдуарда Тубина (1905–1982), чье имя символизирует фундамент национальной симфонической школы. В качестве реверанса к юбилею Первой армянской республики в начале программы был исполнен знаменитый Вальс из сюиты “Маскарад”

Арама Хачатуряна.

Один из старейших в республике НСОЭ (основан в 1926–м) на ереванском концерте предстал достойным носителем традиций чисто европейского оркестра. Его состав укомплектован высокопрофессиональными музыкантами, индивидуальные достоинства которых ставятся на службу общего художественного результата. Гармонично сбалансированные инструментальные группы вплетают в оркестровую ткань свои “волокна”, придавая ей качества прочности и благородства. Даже в инструментальных соло избегалась яркость высказывания, нарушающая тембровую соразмерность как первоочередную задачу оркестра. И все же нельзя не отметить превосходство струнной группы – интенсивность ее звука, штриховую культуру, пластику фразообразования и голосоведения. Не случайно, что на “бис” оркестр сыграл глубоко проникновенное “Andante festivo” для струнного оркестра и литавр Яна Сибелиуса (1922, авторское переложение для струнного квартета), словно подтверждая преемственность эстонских композиторов, и в частности Тубина, к музыкальной эстетике финского классика.

В Фортепианном концерте А. Лембы солировал лучший представитель молодого поколения эстонских пианистов Микель Полл, обладатель изысканно-филигранной техники, исполнивший трехчастный концерт Лембы в концепции поистине нордического темперамента. И все же жаль, что музыка Лембы была не в состоянии раскрыть диапазон дарования Полла. Автор пяти фортепианных концертов, Лемба-пианист ориентировался на предшествующий композиторский опыт. Так и здесь, в крайних частях постро-мантического Второго концерта (1934) заметно присутствие идей Э.Грига (жанровые и композиционные особенности, броская аккордика, арпеджированные пассажи), а во второй части культивировался медитативный образ романтической лирики.

Лучшие качества дирижера и его оркестра раскрыла интерпретация Пятой симфонии (1946) Эдуарда Тубина. Для маэстро Нееме Ярви, с 2010 года возглавляющего НСОЭ, музыка Тубина – основа основ эстонской музыки XX века. Однако дирижерские пристрастия охватывают как период Тубина, так вторую половину XX века, когда созвездие эстонских композиторов уверенно занимает лидирующие позиции в странах Балтии. Феномен эстонского национального мышления и музыкального языка определяет исходную позицию Ярви. Следуя концепции Тубина, он выстраивает монументальное эпическое повествование о судьбе личности в современном мире. Очевиден автобиографический подтекст сочинения, созданного автором вскоре после его эмиграции в Швецию.

Трехчастная симфония Тубина, основанная на поэтапном, обеспечивающем перспективу цикла, варьировании исходной терцово-попевки с вторгающимися в этот процесс быстро гаснущими кульминациями, под батутой Ярви приобрела особую монументальность. Выдержанность академического стиля, преобладание плотной оркестровой фактуры, продление психологических состояний и рядом – импульсивный прорыв в сферу энергии (например, в финале) – эти свойства музыки Тубина являются характеристиками и оркестра. Впечатлила масштабность мысли во второй части *Andante*: ностальгический образ не замкнут, он дан в становлении, приводящем к массивным кульминациям у медных. Свообразное отражение этой части дирижер выявил в лирическом эпизоде симфонии.

Иная артистическая и музыкально-стилистическая атмосфера царила во время концерта на открытом воздухе ансамбля старинной музыки “Hortus Musicus”. Европейская общечеловечность, видимо, будет иметь возможность увидеть это зрелищное выступление, которое запечатлила с помощью современных высокотехнических дронов аэрофотосъемка. Сохранившиеся гигантские апсиды разрушенного храма “Звартноц” служили естественной декорацией артистам; и красота меняющегося на глазах небесного свода, и краски гаснущего дня, на смену которым пришла искусственная подсветка сценического подмостка, театрализо-

вали ауру концерта.

Собственно, театральность – один из компонентов ансамбля “Hortus Musicus”, созданного в Таллине в 1972 году Андреасом Мустоненом, большим знатоком раннехристианского и последующих исторических периодов музыки. До сих пор ансамбль сохраняет престижную позицию в международной концертной деятельности (с XXI века задействованы румынский ансамбль “Flauto dolce”, бельгийский “Clematis”), благодаря исключительному профессионализму музыкантов, свободно играющих на различных старинных (а сейчас и народных – дудук) инструментах. Это шалмей, шом – разновидности гобоя, раушпфайт – свирель, блокфлейты – барочные флейты (среди них кетл, рекордеры в регистровых разновидностях), керен – рог, медные натуральные инструменты – безвентильная труба, тромбоны, а также виолон – виола да гамба, кларесин, ударные. На инструментах играют и вокалисты ансамбля, в тот вечер Анто Оннис, Тонис Кауманн, Рио Ридбек. Их голоса исключительно глубинного звучания, как и общая манера вокального интонирования (без вибрато) в сочетании со сценической раскрепощенностью движений и мимики создают впечатление оживших живописных полотен далекого прошлого.

Программа концерта включала 13 отрывков из известной рукописи начала XIII века “Кармина Бурана” (лат. “Бойренские песни”; название принадлежит И.А.Шмеллеру, в 1847 году издавшему сохранившуюся в аббатстве Беннедикт-Бойрен, близ Мюнхена, рукопись), представляющей собой документ лирической поэзии и музыки, главным образом, светского содержания. Отобранные песни на латинском языке – куртуазные, застольные, нравоучительные и религиозно-философские – “Hortus Musicus” исполнил в аранжировке художественного руководителя Андреса Мустонена – основного автора аранжировок огромного репертуара ансамбля. Многоопытный солист-скрипач, он является своего рода гидом, определяя стилистическую направленность и эмоциональный тонус интерпретации. За этим стоит талант не только музыканта, но и исследователя, постигшего каноны раннего искусства на материале как нотных источников, так и руководств по композиции и импровизации.

Одним из них является “Trallado de glosos” (“Трактат о глосах”, то есть варьированию, украшению мелодии; 1553), принадлежащий Диего Ортису. Его Ричеркар исполнялся во второй части концерта, названной “La Folia”. Здесь, помимо Ортиса, были представлены по два сочинения Хуана дель Энсины (XVI в.) и Франциско де ла Торре (XV в.; его необычайно красивые вокальные дуэты, окрашенные мистическим настроением – “Скажи мне, печальное сердце” и “Поклонись тебе, Господи”) и два инструментальных сочинения итальянских мастеров XVII–XVIII веков – “La Folia” Алессандро Скарлатти и знаменитая Соната N 12 op.5 для скрипки и цифрованного баса Арканджело Корелли (в аранжировке Т.Кауманна). При исполнении “Кармины Бураны” и малой антологии фолии музыканты “Hortus Musicus” продемонстрировали широкий спектр искусства варьирования и импровизации, в частности, приемы диминуции, то есть ритмического дробления звуков, глосирования, использования слоговых распевов и свободных мелодических украшений, зачастую делающих скромные строфические формы вариационными, или дифференциас, как они именовались в испанской практике.

Андрес Мустонен, с 1972 года, то в качестве дирижера, то с ансамблем неоднократно приезжающий в Ереван, в этот день превзошел самого себя, подтвердив органичное присутствие в армянской культуре (в концерте приняли участие две юные исполнительницы на каноне, народном инструменте), а также как энтузиаст ее музыки, когда в 2015 году в Иерусалиме, в ознаменование 100-летия Геноцида армян, дирижировал Четвертой симфонией Степана Ростомяна.

СВЕТЛАНА КОРЮНОВНА САРКИСЯН, доктор искусствоведения, профессор ЕГК

ՏԱՐԵՎԵՐԶՅԱՆ ՀԱՄԵՐԳ Կ. ՍԱՐԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՈՑՈՒՄ

1 Եվ այս փոքրիկները, որ ժամանակ առաջ դրա մասնակիցն էին, իրենց մեջ կրում էին հպարտության այդ զգացումը և մեծ գործ արած մարդու պատվախնդրությունը: Գուցե մինչև վերջ չէին տիրապետում կատարվող իրադարձության ողջ իմաստին, բայց մանկական պարզամտությամբ ընկալում էին, որ իրենք այն ժողովրդի մասնիկն են, ով կարող է ազգովի շատ կարևոր փոփոխություն անել իր երկրում, իսկ այդ պահին աշխարհը շունչը պահած հետևում էր իրենց: Սա քաղաքակրթությունն է, այլ հոգեբանական փոփոխության հայկական ձև, ինչի մասնակիցն էին նաև անվերապահորեն փոքրիկները: Եվ քանի որ, երաժշտական կրթությունն ինքնին հոգի կերտելու և այն ձևավորելու միջոց է, ապա իրադարձությունը չէր կարող չազդել մանուկների վրա: Ահա այս շատ կարևոր իրադարձությունն էր, որ փոխել էր ընդհանուր մթնոլորտն իր մեջ շաղախելով հպարտության, ուժի ու կարողության, ապագայի նկատմամբ ունեցած լույսով:

Տարեվերջյան համերգն սկզբից մինչև վերջ ուղեկցվեց փայլուն ելույթների ու վստահության զգացումով: Սա այն արժանի աշխատանքի գնահատականն էր, որ կատարել էր Սարաջյանի անվան երաժշտական դպրոցի նվիրյալ կուլե-տիվն իր հմուտ, պրոֆեսիոնալ և ազնվաբար տնօրինության հետ մեկտեղ: Տնօրեն Արմինե Պողոսյանն ու փոխտնօրեն Գայանե Կարապետյանն իրենց պատվարժան հյուրերի հետ միասին վայելում էին կատարած իրաշալի աշխատանքի պտուղները: Համերգի արդյունքներով հիացած իրենց շնորհակալական խոսքն այս առումով ասացին կոմպոզիտոր Գեղունի Զթյանը, Ա. Բաբաջանյանի անվան մանկավարժական քոլեջի տնօրեն Արմեն Հարությունյանը, Արաբկիր թաղապետարանի «Կրթության և մշակույթի» բաժնի պետ Գայանե Հարությունյանը: Գեղունի Զթյանը նույնիսկ ակնարկեց, թե արժեր իրավիճակն ան մեր վարչապետ պարոն Նիկոլ Փաշինյանին և ինքն իր խոսքը հաստատելով հավելեց, թե չնայած զբաղվածությանը նա անպայման կգար ու կվայելեր իր ու իր ժողովրդի կատարած յուր տեսակով եզակի հեղափոխության արժանի պտուղները: Նա նաև հավելեց, որ վարչապետի հետ արվեստագետների հանդիպումից հետո ինքն առավել քան համոզվել է, որ մերժում չէինք ստանա և որ վարչապետի կարծիքով իր համար առավել ևս հինա չկան անկարևոր գործեր:

Պատկերացնելն անգամ դժվար է, թե ինչ փոփոխություն ու առաջընթաց է սա, երբ դպրոցի ավարտական համերգին ներկա է ոչ ավել ոչ պակաս երկրի վարչապետը: Սա իհար-

կե և անպայմանորեն դուրս է քաղքենիության այն կանոններից, թե վարչապետը միայն երկրի կարևոր և իրատապ գործերով պետք է զբաղված լինի: Սակայն եթե կյանքի աչքերին ուղիղ և ճշմարիտ աչքերով նայենք, ավելի կարևոր ու արժանապատիվ գործ, քան վաղվա սերունդ դաստիարակելն, միայն մեր երկրի պաշտպանության գործն է:

Անդրադառնալով, կարևորում են նշել որոշ կատարումներ, որոնք էլ ավելի փայլ տվեցին համերգին. Վյենյակսկու ջութակի Կոնցերտի 2-րդ մասը կատարել է Ինեսա Պետրոսյանը (ջութակ), կոնցերտմայստեր՝ Մարիամ Զիլինգարյանը, պրոֆեսոր Արմեն Հովհաննիսյանի դասարան, Պոլ Բազելեր «Լեռներում»՝ Գարիկ Պողոսյան (թավջութակ), կոնցերտմայստեր՝ Արմինե Պողոսյան, Գայանե Ռաֆայելյանի դասարան, Ռոբերտ Պետրոսյանի «Ռապսոդիա»-ն հնչեցրեց Մարիամ Սարգսյանը (քանոն) կոնցերտմայստեր՝ Գայանե Ղազարյան, Անուշ Կիրակոսյանի դասարան, ժողովրդական երգ «Ծաղիկ ես», կատարեցին Արմեն Արսենյանը (դուդուկ) և կոնցերտմայստեր՝ Լիլիթ Զաքարյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Արմեն Գրիգորյանի դասարան: Իր հեղինակային ստեղծագործության կատարումով հանդես եկավ ստեղծագործության բաժնի աշակերտ Էդուարդ Ալեքսանյանը, որը սովորում է ՀՀ ժողովրդական արտիստ Գեղունի Զթյանի դասարանում: Հիշարժան համերգն ավարտվեց երեք տարիքային խմբերից բաղկացած երգչախմբերի ելույթներով: Համերգը եզրափակվեց երգչախմբերի միացյալ ելույթով: Որպես վերջին ակկորդ հնչեց Գեղունի Զթյանի «Հայաստանյան աշխարհ» (կամ «Պատանեկան հիմն») ստեղծագործությունը, ինչը շատ համահունչ էր տարվա և համերգի իմաստին:

Եզրափակելով, հիշենք իմաստուն ասացվածքը. «Եթե հիշելու բան ունես, ուրեմն ճիշտ ես ապրել»: 2017-2018 ուսումնական տարին ճիշտ ապրած տարիների թվում է, ինչն ապացուցեց Կ. Սարաջյանի անվ. երաժշտական դպրոցի սաների տարեվերջյան իրաշալի ելույթը:

ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
քանոնահարուհի, ժուռնալիստ



Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոցի միացյալ երգչախումբ, ղեկ.՝ Անահիտ Սարգսյան



Ժողովրդական գործիքների անսամբլ, ղեկ.՝ Անուշ Կիրակոսյան

«Թանգարանը երեխաներին» միջոցառում Կոմիտասի թանգարան-ինստիտուտում

ՀՈՒՆԻՍԻ ՄԵՆԷ ԵՐԵՎԱՆԵՐԻ ԳԱՇՏԳԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵ Է

3 Ժամանակակից երեխաները Կոմիտասին նորովի բացահայտելով նրան նաև որպես բանաստեղծ:

Նրանք առանց զլանալու, մեծ ոգևորությամբ կատարեցին մի քանի շրջայցեր: Նրանցից յուրաքանչյուրն իր խմբում ուներ շատ այցելուներ, որոնք մեծ հետաքրքրությամբ ունկնդրում էին փոքրիկ էքսկուրսավարներին:

Շրջայցից հետո երեխաները հյուրերին հրավիրեցին Կոմիտասի թանգարան-ինստիտուտի համերգասրահ, որտեղ նրանց սպասվում էր անակնկալ համերգ փոքրիկ էքսկուրսավարների կատարմամբ: Նրանք հանդես եկան իրենց ելույթներով սկզբում հյուրերի հետ միասին կարդացին Կոմիտասի երեխաների համար գրված աղթքը, այնուհետև սկսվեց իրաշալի ելույթներով հագեցված համերգը:

Կոմիտասը կարևորում էր երաժշտական ուսուցումը, ջանք չէր խնայում և միշտ ժամանակ էր տրամադրում դասավանդմանը: Դասի ընթացքում կատակներով զվարթ տրամադրություն էր ստեղծում համարելով, որ բարձր տրամադրությունը երեխաների սովորելու առաջին պայմանն է:

Միջոցառման վերջում երեխաները պարզատրվեցին շնորհակալագրերով:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տիրում էր տոնական տրամադրություն, երեխաների համար ստեղծված էին բոլոր պայմանները՝ նրանց հուշերում այդ օրը անմոռանալի դարձնելու համար:

Երեխաները նվագում էին, երգում, նկարում: Նրանք մասնակցեցին հատուկ իրենց համար նախատեսված հյուրասիրությանը:


Միջոցառման մասնակիցները՝ հանրակրթական, երաժշ-



Փոքրիկ էքսկուրսավարները Կոմիտասի թանգարան-ինստիտուտում



Երեխաների ելույթը թանգարան-ինստիտուտում



Ազդը ձևավորվել է Ամելի Ոսկանյանի (8 տարեկան) նկարով

«Թանգարանը երեխաներին» միջոցառում Կոմիտասի թանգարան-ինստիտուտում



պետներ, բժիշկներ, գիտնականներ, լեզվաբաններ, սակայն, հուսով ենք, որ Կոմիտասի թանգարանում էքսկուրսավարի դերում հանդես գալը միշտ կմնա նրանց մանկական վառ հիշողություններում և թանգարան այցելելը նրանց համար կդառնա կենսակերպ:

Երեխաները Կոմիտասի թանգարան-ինստիտուտում, հանդիպման կազմակերպիչ Մարինա Վարդյան (թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն)

Նկարների ցուցահանդես

ՍԱՐԻԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ղաշնակահարուհի,
Կոմիտաս թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն

11 տական, արվեստի տարբեր դպրոցների սաները, թանգարանից հեռացան բարձր տրամադրությամբ, ձեռք բերված գիտելիքներով և նոր՝ անկրկնելի զգացողություններով:

Մենք ականատես եղանք, թե ինչպիսի խանդավառությամբ նաև ծնողները և ուսուցիչներն էին ոգևորում երեխաներին: Մենք չգիտենք, թե նրանք ինչ մասնագետներ կդառնան. կընտրեն երաժշտության ուղին, կլինեն ճարտարա-

ՏԻԳՐԱՆ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ՀՈՒՆԻՍՅԱՆ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ



Տիգրան Բունիսյան

Հունիսի 23-ին տեղի ունեցավ հայտնի երգեհոնահար, երաժշտագետ Տիգրան Բունիսյանի (2014 թվականի ԵՊԿ շրջանավարտ) համերգը: Նա 2016 թվականին հրավեր է ստացել աշխարհի ամենահայտնի երգեհոնահար Ջեյմս Դևիդ Քրիստի կողմից ուսումը շարունակելու նրա դասարանում Օբեռլինի կոնսերվատորիայում: Եվ իր հերթական արձակուրդն անցկացնելով Երևանում երեք համերգ ունեցավ Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը: Առաջին համերգը հունիսի 9-ին էր իտալացի հայտնի երգեհոնահար Մատեո Իմբրունոն հրավիրված էր համատեղ համերգի Տիգրան Բունիսյանի հետ: Նա Հոլանդիայում Ամստերդամի ամենահին կառույցի՝ XIII-XVI դարի Օդե Կերկ եկեղեցու, երգեհոնահարն է: Եվ Եվրոպայի ամենահայտնի երգեհոնահարներից է իր համերգային գործունեությամբ, կատարում է հնագույն երաժշտություն, ժամանակակից այդ եկեղեցուն ծառայել է Յան Պետերսոն Ավելինգին, ուստի նրա երկացանկն առավելապես կազմում են Ավելինգի ու ռեներեսանսի շրջանի, բարոկկո ոճի ստեղծագործությունները: Մատեո Իմբրունոն Յան Պետերսոն Ավելինգի անվ. երգեհոնահարների մրցույթի նախաձեռնողն է և բացի այդ Եվրոպայում հայտնի մի քանի երգեհոնային փառատոների կազմակերպիչ և ղեկավար: Նա նվագում է 1724 թվականի հայտնի Քրիստիան Մյուլերի պատրաստած երգեհոնի վրա, նշվածս եկեղեցուն: Այն Եվրոպայի լավագույն պահպանված իր նախնական կառուցվածքով ամենահայտնի գործիքներից մեկն է: ԱՄՆ-ում իր հյուրախաղերի ժամանակ հավանելով Տիգրան Բունիսյանի գործունեությունը, նրան հրավիրել է

համատեղ համերգի, որն իրականացվում էր Երևանում: Նրանք նաև կազմեցին հետագա ստեղծագործական գործունեության պլաններ: Երևանյան համատեղ համերգին կատարեցին Գ. Հենդելի «Հուդա Մակվենացին» օրատորիայից Կոնցերտը, Մարին Մարե «Ալչինոն» օպերայից Սիմֆոնիան, Վիվալդի՝ Դո-մա-ժոր Կոնցերտը, Անդրեաս Կենելեր՝ «Nun Komm der Heiden Heiland», Մեզիսիոր Շիլդ՝ «Paduana Lachrymae», Յ. Ս. Բախ՝ երգեհոնի մի-մինոր Պրեյլուդիա և ֆուգա երկերը: Վերջին երեք երկերը կատարել է Տիգրան Բունիսյանը: Բացի վերջին ստեղծագործությունից Յ. Ս. Բախի բոլոր գործերը Երևանում կատարվում էին առաջին անգամ: Եվ ուրախալի է, որ նման բարձր կարգի մասնագետից խրախուսանքի խոսքեր լսեցինք, որ լավ գործիք է և շատ լավ պահպանված, Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տան երգեհոնը, որի պատրաստող վարպետը՝ Ֆրից Էլշաուսն էր, նույնպես Հոլանդիայից էր հրավիրված ժամանակին և ամ-միջապես իր կարծիքը հեռախոսով հայտնել էր վարպետին: Դա նաև տնօրեն, ականավոր ակտիստ և հիմնալի երաժիշտ Վաչե Հովեյանի գիտակից մասնագիտական առուեսման արդյունքն է պահպանելով այդ գործիքը պատշաճին և արժանանալով դրվատանքի խոսքերի՝ կատարողների և վարպետի կողմից: «Մատեո Իմբրունոն շատ մարդասեր և շփման մեջ անմիջական անձնավորություն է և բոլորը հիացած էին նրա մարդկային բնավորությունների ջերմ դրսևորումներով: Մեզ համար անսովոր, օրինակ մետրական առումով ազատ էր նա նվագում և յուրահատուկ հպում ուներ ստեղծերին և հիմնական փորձը դա էր, որ հատուկ ուսումնասիրում էր հնչողությունը և հնչյունի խորությունը և հպման արագությունը: Նրա հնչյունարտաբերման որակն իսպառ




Տիգրան Բունիսյան, Աննա Բակունց

տարբեր է և շատ ուսանելի».- նշում է Տիգրան Բունիսյանը: Նա վարպետության դասեր անցկացրեց Տիգրան Բունիսյանի, Աննա Բակունցի, Հարություն Թազվորյանի, Թերեզա Ոսկանյանի հետ: Նա առավել ուշադրություն էր դարձնում դետալների տարբերի ու նրա աշակերտներից մեկը ասել է. «Դուք սովորեցնում եք զգացմունքի գեղագիտություն, այսինքն՝ բոլոր երաժշտական արտահայտչամիջոցները մեկ ընդհանուր զգայական միջավայր ստեղծելուն եք ծառայեցնում»:


ԳՐԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Երաժշտագետ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀՀ մշակույթի նախարարության պատվերով լույս է տեսել ՀԽՍՀ ԳԱ անդամ, գիտության վաստակավոր գործիչ, Մեսրոպ Մաշտոցի անվ. մրցանակի դափնեկիր Վազգեն Չալոյանի «Հայկական Ռեներեսանս» աշխատությունը: Այն առաջին խոշոր մենագրությունն է ոչ եվրոպական ժողովուրդների Ռեներեսանսի՝ Վերածնունդի վերաբերյալ, որում հեղինակը բազմակողմանիորեն կրոնի, փիլիսոփայության, գրականության և արվեստի նյութերի հիման վրա քննարկվող հայկական Վերածնունդի հարցերը կապում է երկրի սոցիալ-տնտեսական պատմության համապատասխան շրջանների հետ: Աշխատությունն առաջին անգամ լույս է տեսել 1963 թ. Մոսկվայում՝ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ: 1964 թ. Երևանում հայերենով լույս է տեսել «Հայկական Ռեներեսանս» գիրքը, որում հեղինակը կատարել է մասնակի լրացումներ՝ առանց բուն տեքստը փոփոխելու: Ռուսերենով հրատարակության վերջաբանը, որը գրել է գր-

քի խմբագիր, ակադեմիկոս Ն. Ի. Կոնրադը, վերջինիս ցանկությամբ, անփոփոխ գետեղված է նաև հայերեն հրատարակության մեջ: Գրքի պատասխանատու խմբագիրն է Նիկոլայ Կոնրադը, խմբագիրը՝ Ծովհնար Չալոյան, տեխնիկական խմբագիրը՝ Արարատ Թովմասյան, էջադրող՝ Նարինե Հովհաննիսյան, սրբագրիչ՝ Գալուստ Սահակյան: Կազմը՝ Սևանա Գրիգորյանի: Կազմված է 200 էջից և 6 գունավոր ներդիրից: Տպագրությունն իրականացվել է Երևանում, «Անտարես» հրատարակչատանը: Հրատարակվել է խմբավար-մանկավարժ, Խ. Աբովյանի անվ. ՀԳՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտական մանկավարժության ամբիոնի դոցենտ Ռիմնա Հակոբովայի «Երաժշտության ուսուցման նշանակությունը և կազմակերպման ձևերը հանրակրթական դպրոցում» մեթոդական ձեռնարկը: Այն ուղեցույց է հանրակրթական դպրոցների երաժշտության դասատուների համար, որտեղ ընդգրկված են երաժշտության ուսուցման և կազմակերպման ձևերը, մեթոդները՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները, կարողություն-



ները: Ձեռնարկն ուղղված է մանկավարժական գործընթացի ճիշտ, գրագետ և արդյունավետ իրագործմանը: Այստեղ արծարծվում են երաժշտության դաստիարակությանը տրվող հզոր դերի և աշակերտի գեղագիտական ճաշակի ձևավորմանը նպաստող բազմաթիվ խնդիրներ: Գրքի սկզբում, ձեռնարկի մասին կարծիք է հայտնել վերջինիս գրախոս, ՀԵԸ նախագահ ԵՊԿ խմբավարության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ Մշակույթի վաստակավոր գործիչ Դավիթ Ղազարյանը: Խմբագիրն է Ժ. Հովսեփյանը: Տպագրությունն իրականացվել է Երևանում, «Հայրապետ» հրատարակչությունում: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով աշխատանքը երաշխավորված է որպես ուսումնառական ձեռնարկ:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՆԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՏԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03U059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՅԱՆ, ԳՐԱՐ ՇԱԳՈՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:
Տպաքանակը՝ 101: Ծավալը 12 էջ: Ստորագրված է տպագրության 27.06.2018:
Տպագրվում է՝ «ԳԵՎՈՐԳ ԵՎ ՀՐԱՅԻՐ» ՍՊԸ տպարանում:
Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունն նշված հասցեով.

0001, ք.Երևան, Սայաք-Նովա 1ա
հեռ.՝ (+374 10) 523 993+118
ֆաքս՝ (+374 10) 563 540,
http://www.conservatory.am,
E-mail: yksc@conservatory.am,
E-mail: YSCPublishingHouse@conservatory.am

